




ՀՀ ԳԱԱ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԾՈՒՄ (ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂՈՒՄ) ՍՏԵՂԾՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ



Տևական ժամանակ է, ինչ բնապահական ներկայացող աղբյուրների մի մեծ խումբ շինծու պատրվակով փակել է Արցախը (Լեռնային Ղարաբաղը) Հայաստանին կապող միակ, կենսական նշանակության ցամաքային ճանապարհը: Լաչինի միջանցքը: Փաստական ապացուցված է այն հանգամանքը, որ «բնապահական» աղբյուրները, որոնց շարքերում նկատվել են տարբեր պաշտոնյաներ, զինվորականներ, Ադրբեյջանի հատուկ ծառայությունների ներկայացուցիչներ և այլն, որևէ առնչություն չունեն բնապահական գործի հետ: Սակայն նրանց գործողությունների արդյունքում Արցախի բնակչությունն արդեն տասներորդ օրն է՝ հայտնվել է շրջափակման մեջ:

Մեր օրերում, երբ արդի քաղաքակիրթ աշխարհը համընդհանուր քննադատության է արժանացնում մարդու իրավունքների ոտնահարման նվազագույն փորձը, Արցախի բնակչությունը հումանիտար աղետ է ապրում՝ զուրկ պարենի և դեղորայքի ծեռքերման, բուժօգնության, ազատ տեղաշարժի և այլ հիմնարար իրավունքներից: Արցախում՝ իր պատմական հայրենիքում, այժմ բնակվում է 120 հազար մարդ, գրեթե մուլեքան, որքան կազմում է, օրինակ, Օւլեանի (Ֆրանսիա), Քեմբրիջի (Մեծ Բրիտանիա) կամ Ցյուրիխի (Շվեյցարիա) բնակչության թիվը: Անհմար է պատկերացնել միջազգային հանրության լռությունը և անգործությունը, եթե նմանօրինակ վտանգի առջև հայտնվեին թվարկված քաղաքները (տարածաշրջանները): Ադրբեյջանի ռազմաքաղաքական դեկավարության կողմից կոորդինացվող այս գործողությունները խախտում են ոչ միայն 2020 թ. նոյեմբերի 9-ին ձեռք բերված եռակողմ համաձայնությունը խաղաղության վերաբերյալ, այլև ուղղակիորեն ոտնահարում են ՄԱԿ-ի կողմից ընդունված և աշխարհի երկրների մեծ մասի կողմից ստորագրված մարդու իրավունքներին վերաբերող միջազգային կոնվենցիաները և համաձայնագրերը:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան խստիվ դատապարտում է արդի բարդ աշխարհաքաղաքական իրադրության պայմաններում Ադրբեյջանի կողմից իրականացվող այս սադրիչ և վտանգավոր քայլերը:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան կոչ է անում իր միջազգային գործընկեր կառույցներին, միջազգային հումանիտական կազմակերպություններին բարձրաձայնելու իր իսկ պատմական հայրենիքում ստ-

վի, բուժօգնության և դեղորայքի ծեռքերման անհմարիմության, ցեղասպանության իրական վտանգի առջև կանգնած հայերի հարցը, աշակցել և լուծումներ առաջադրել: Հակառակ պարագայում մարդու իրավունքները որպես բարձրագույն արժեք հռչակված երկրների, հումանիտական առաքելություն իրականացնող միջազգային խոշոր կազմակերպությունների հռետորաբանությունը կարող է տեղիք տալ լրջագույն կասկածների՝ դրանց ազնվության և կիրառելիության օբյեկտիվության հարցում:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին
21.12.2022



«Ռուսարոմ»-ի ղեկավարության հետ քննարկվել են հնարավոր համագործակցության հարցերը

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ ակադեմիկոս Աշոտ Սադյանը 2022 թ. դեկտեմբերի 15-ին Մոսկվայում հանդիպել է «Ռուսարոմ» պետկորպորացիայի բարձր ղեկավարության հետ: Գլխավոր տնօրենի տեղակալներ Յուրի Օլենինի, Ալեքսեյ Դուբի և Մտավոր սեփականության և միջազգային ծրագրերի վարչության ղեկավար Մաքսիմ Բոգաչևի հետ քննարկվել են ՀՀ ԳԱԱ ինստիտուտների հետ հնարավոր համագործակցության հարցերը: Աշոտ Սադյանը ներկայացրել է ՀՀ ԳԱԱ համապատասխան ինստիտուտների գործունեությունը, առկա ռեսուրսները, իրականացվող հետազոտությունները պլանային տեխնոլոգիայի, միջուկային բժշկության, նյութաբանության, կենսատեխնոլոգիայի ոլորտներում:

«Պայմանավորվածություն է ձեռք բերվել կազմակերպել պատվիրակությունների այցելություններ Երևան և Մոսկվա՝ տեղում ինստիտուտների հետազոտություններին ծանոթանալու համար», - ասաց ՀՀ ԳԱԱ նախագահը:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՀՀ ԳԱԱ-ի և ՌԴ ԳԱ-ի միջև համագործակցությունը խորացնելու նոր պայմանավորվածություն

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ ակադեմիկոս Աշոտ Սադյանը Ռուսաստանի Դաշնություն կատարած աշխատանքային այցի ժամանակ հանդիպել է ՌԴ գիտությունների ակադեմիայի նորընտիր ղեկավարության՝ ՌԴ ԳԱ նախագահ ակադեմիկոս Գեմադի Կրասնիկովի, փոխնախագահների և բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարների հետ: Քննարկվել են հետագա



համագործակցության հարցերը, ՀՀ ԳԱԱ-ի և ՌԴ ԳԱ-ի միջև 2021թ. նոյեմբերի 5-ին կնքված Գիտատեխնիկական համագործակցության համաձայնագրի դրույթների իրականացման ճանապարհային քարտեզը: Որոշվել է ստեղծել աշխատանքային խումբ, որը ճանապարհային քարտեզի 54 կետերից կընտրի առավել կարևորները, և աշխատանքներ կտարվեն դրանց կյանքի կոչման ուղղությամբ:

«Համագործակցության համար երկկողմանի շահագրգռվածություն կա: Կարևորելով անցյալը, կարևորելով այն պատմությունը, որ ունեցել են մեր ակադեմիաները համատեղ դեռևս ԽՍՀՄ տարիներից և այն նախադրյալները, որ առկա են այսօր, պետք է իրենց շարունակությունը գտնեն ապագայում», - ասաց ՀՀ ԳԱԱ նախագահը: Նա նշեց, որ

պայմանավորվածություն է ձեռք բերվել համատեղ աշխատանքներ կատարել հայ-ռուսական այն պայմանագրերի ուղղությամբ, որոնք գործել են Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի համատեղ ֆինանսավորմամբ: «Աշխատանքները շարունակելու համար պետք է ստորագրվի միջպետական համագործակցության պայմանագիր Ռուսաստանի գիտական հիմնադրամի և ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի միջև: Ռուսական կողմը շահագրգռվածություն է հայտնել համատեղ ծրագրեր իրականացնելու ուղղությամբ», - ասաց ակադեմիկոս Աշոտ Սադյանը:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ԽՍՀՄ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

ԽՍՀՄ կազմավորումը համաշխարհային պատմության այն բացառիկ իրադարձություններից էր, որը փոխեց աշխարհի դինամիկը և մեծապես ազդեց նրա զարգացման հետագա ընթացքի վրա: Այդ դարակազմիկ պատմական իրադարձության 100-ամյակին էր նվիրված ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի կազմակերպած միջազգային գիտաժողովը, որը կայացավ 2022 թ. դեկտեմբերի 13-ին:

Գիտաժողովին մասնակցում էին Ռուսաստանի ԳԱ ընդհանուր պատմության և Ռուսաստանի պատմության ինստիտուտների, ՌԴ Հյուսիսկովկասյան դաշնային համալսարանի, Բաշկորտոստանի Հանրապետությունում Ռուսաստանի ԳԱ ներկայացուցչության, Բելառուսի ԳԱԱ պատմության ինստիտուտի և Հայաստանի գիտական և բուհական մի շարք կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Գիտաժողովի սկզբում ողջույնի և բացման խոսքով հանդես եկան ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը և ՀՀ ԳԱԱ հա-

յազիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Սուվարյանը:

Պլենարի նիստում զեկուցումներով հանդես եկան ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը, պատմական գիտությունների դոկտորներ Կարեն Խաչատրյանը, Ալեքսանդր Զուբինը, Իգոր Կրյուչկովը, Տամարա Կրասովիցկայան և ուրիշներ:

Միջազգային գիտաժողովի չորս նիստերում ընդհանուր առմամբ լսվեցին ավելի քան երեսուն զեկուցումներ՝ նվիրված ԽՍՀՄ և ՀԽՍՀ պատմության տարաբնույթ հարցերին: Արժևորվեցին այն լավն ու դրականը, որ եղել են ԽՍՀՄ պատմության յոթամասուն տարիներին, ինչպես նաև վեր հանվեցին այն սխալներն ու բացթողումները, որոնք ի վերջո հանգեցրին երկրի կազմալուծմանը:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը նախատեսում է գիտաժողովի նյութերն առաջիկայում լույս ընծայել առանձին ժողովածուով:

Երկաթի նանոմասնիկներ, որոնք կարող են կիրառվել հիվանդներից բաղկեղային էկզոսոմներ անջատելու համար

ՀՀ ԳԱԱ Հրաչյա Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտում ստացվել են երկաթի նանոմասնիկներ, որոնք օժտված են մագնիսական հատկություններով և պերօքսիդազային ակտիվությամբ, ինչը թույլ է տալիս կիրառել դրանք կենսասենյուկներում և իմունաֆերմենտային անալիզի տարբեր ձևաչափերում:

«Նանոմասնիկները ներկայումս դիտարկվում են որպես արհեստական ֆերմենտների աղբյուրներ: Մասնավորապես, երկաթի նանոմասնիկները հեռանկարային են, քանի որ հնարավորություն են ստեղծում թանկարժեք և անկայուն բնական ֆերմենտը փոխարինել նանոմասնիկներով հատկապես իմունաֆերմենտային անալիզում: Բացի այդ, մագնիսական նանոմասնիկները կարող են կիրառվել տարբեր հետաքրքրություն ներկայացնող մոլեկուլների և բջիջների անջատման գործում տարբեր բարդ միջավայրերից: Դա, մասնավորապես, կարևոր է հիվանդներից բաղկեղային էկզոսոմներ անջատելու համար հետագա իմունոթերապիայի համար», - ասաց ՀՀ ԳԱԱ Հրաչյա Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտի բժշկական կենսատեխնոլոգիայի լաբորատորիայի վարիչ, գիտական խմբի ղեկավար, կենսաբանական գիտությունների թեկնածու Վարդան Գասպարյանը:

Գիտական խումբն իրականացրել է նաև սննդի անվ-

տանգությանը վերաբերող հետազոտություններ և բուսական աղբյուրներից անջատել է հիստամինազ ֆերմենտը, որը կիրառվում է սննդում հիստամինի քանակը գնահատելու համար:

«Չկնամքերի և մսամքերի որակի ցուցանիշը հիստամինի բացակայությունն է, որի արագ չափումը թույլ է տալիս որակապես գնահատել մսամքերը: Այդ խնդիրների լուծման համար անջատվել է հիստամինազ ֆերմենտը, որն առանցքային է հիստամինի որոշման համար: Սննդի անվտանգության ոլորտում հնարավոր կլինի ստեղծել խելացի փաթեթներ, որոնց գունային փոփոխությունները թույլ կտան անգեմ աչքով գնահատել մսամքերի որակը», - նշեց Վարդան Գասպարյանը:

Գիտական խմբի մեկ այլ հետազոտության շրջանակում իրականացվել է տարբեր ֆունկցիոնալ խմբերի առկայությամբ ու բարձր քվանտային ելքով և ֆլուորեսցենցիայի լայն տիրույթով օժտված կարբոնային կետերի սինթեզ:

Հետազոտություններին մասնակցել են ինստիտուտի Բժշկական կենսատեխնոլոգիայի լաբորատորիայի երիտասարդ գիտաշխատողները:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Արթուր Իշխանյանը դասախոսությունների շարքով հանդես է եկել Իտալիայի համալսարաններում

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Արթուր Իշխանյանը 2022 թ. դեկտեմբերի 1-16-ը Իտալիայի մայրաքաղաք Հռոմում հանդես է եկել 20 դասախոսությունների շարքով: Իտալական ՅՈՒՆԵՍԿՈՒՆ միջազգային տեղեմատիկ համալսարանի (UNINETTUNO International Telematic University) և Տուսկանի համալսարանի (University of Tuscia) ասպիրանտներին (PhD) Արթուր Իշխանյանը ներկայացրել է «Advanced Differential Equations» (Առաջադեմ դիֆերենցիալ հավասարումներ) շարքը:

Այն ներկայացնում էր վերջին տարիներին ժամանակակից ֆիզիկայի և մաթեմատիկայի ոլորտում մեծ տարածում ստացած Հոյմի ֆունկցիաների տեսությունը, որոնք շատ ավելի ընդհանուր ֆունկցիաներ են, քան ներկայումս լայնորեն հայտնի հիպերերկրաչափական դասի ֆունկցիաները: Շարքի հիմքում Արթուր Իշխանյանի ղեկավարած գիտական խմբի (ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ) վերջին 10 տարիների ընթացքում ստացված գիտական արդյունքներն են: Դասախոսությունների շարքը ցուցադրվելու է իտալական և եվրոպական հեռուստաալիքներով:

Իտալական ՅՈՒՆԵՍԿՈՒՆ միջազգային տեղեմատիկ համալսարանի հետ կնքվել է համագործակցության հուշագիր: Հուշագրով, մասնավորապես, նախատեսվում է PhD ծրագրերի իրականացում, ակադեմիական փոխանակում, համագործակցություն գիտական հետազոտությունների ընդհանուր հետաքրքրության ոլորտներում, գիտաժողովների կազմակերպում, պրոֆեսորադասախոսական կազմի և վարչական անձնակազմի վերապատրաստում: Համագործակցությունն իրականացվելու է ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի միջոցով: Ներկայումս պատրաստվում են դրամաշնորհների համար համատեղ դիմումներ:

Արթուր Իշխանյանը հանդիպումներ է անցկացրել Իտալիայի Ֆրասկատիի ազգային լաբորատորիայի (National Laboratory of Frascati) մի քանի առաջատար գիտնականների հետ: Հանդիպումների ժամանակ քննարկվել են ՀՀ ԳԱԱ-ի հետ համատեղ հետազոտությունների իրականացման հեռանկարները:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՀՀ ԳԱԱ «Հայկենոստեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի բացահայտումը

ՀՀ ԳԱԱ «Հայկենոստեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնում իրականացված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ, փոփոխելով Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի հանքաքարի միջավայրի պայմանները, հանքաքարի կոնցենտրացիան, օքսիդացված և սուլֆիդային հանքանյութերի հարաբերակցությունը, պղնձի մանրէաբանական կորզման աստիճանը հնարավոր է հասցնել մոտ 90%-ի:

«Կատարված ապարագիտական հետազոտությունները թույլ են տվել բացահայտել պղնձի միներալի տարրալուծման մեխանիզմը: Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի օքսիդային և սուլֆիդային հանքաքարի կենսատարրալուծման տեխնոլոգիայի մշակման համար», - ասաց գիտական խմբի ղեկավար, ՀՀ ԳԱԱ «Հայկենոստեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի Մետաղների կենսատարրալվացման լաբորատորիայի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր Նարինե Վարդանյանը:

Հետազոտական աշխատանքներում ներգրավված են եղել երիտասարդ մասնագետներ Արևիկ Վարդանյանը, Աննա Խաչատրյանը, Նելլի Աբրահամյանը և Զարուհի Մելքոնյանը:



Հետազոտությունն իրականացվել է ԳԱԱ «Հայկենոստեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի բազային ֆինանսավորմամբ:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

Սևանա լճում երկարաչանչ խեցգետինը գտնվում է ոչնչացման եզրին. ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի հետազոտությունը

Սևանա լճում երկարաչանչ խեցգետինը գտնվում է ոչնչացման եզրին: Այս մասին են փաստում ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի իրականացրած հետազոտությունների արդյունքները: Հետազոտություններն իրականացվել են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից ֆինանսավորվող «Սևանա լճում և նրա ջրհավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառում» ծրագրի շրջանակներում:

Երկարաչանչ խեցգետինը Սևանա լիճ է ներմուծվել 1980-ական թվականների վերջին և, գտնվելով իր գոյության համար նպաստավոր պայմաններ, դարձել է արդյունագործական օբյեկտ: Սակայն խեցգետնի թվաքանակը տարեցտարի կրճատվում է պաշարների վատ կառավարման և պոպուլյացիայի շրջանում տարածված հիվանդությունների հետևանքով:

Խեցգետնի ընդհանուր զանգվածը Սևանա լճում 2021 թ. կազմել է մոտ 78 տոննա: Խեցգետնի պոպուլյացիայի անկման պատճառներից է անօրինական որսը, որի ընթացքում օգտագործվում են զսպանակավոր և չինական հարմոնաձև խեցգետնորսիչներ:

«Սևանա լճի խեցգետնի պոպուլյացիայի վիճակը շարունակվում է վատանալ: Այն կենսառեսուրսը կանգնած է ոչնչացման եզրին», - ասաց ծրագրի ղեկավար, ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի տնօրեն, կենսաբանական գիտությունների թեկնածու Էվելինա Դուկասյանը: Նա նշեց, որ լճի հատակում օրգանական նյութի կուտակման արդյունքում թթվածնային պայմանների վատացումը սահմանափակել է խեցգետինների տարածման սահմանները: Խեցգետինները հիմնականում կենտրոնացված են 3-15մ խորություններում:

2018թ-ից խեցգետնի թվաքանակի կտրուկ անկման պատճառներից է նաև պոպուլյացիայում սկսված ժանգախտ ջրոմիկ սնկային հիվանդությունը, որն ակտիվորեն զարգանում է գյուղատնտեսական և կենցաղային հոսքաջրերով աղտոտված ջրակալներում:

Սևանա լճի խեցգետնարդյունավետությունը վերականգնելու նպատակով ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնն առաջարկել է պատկան մարմիններին հրատապ միջոցառումներ իրականացնել, մասնավորապես, արգելել խեցգետնի որսը լճում և պայքարել որսագողության դեմ, արգելել խեցգետնի վաճառքը երկրի ներսում և արտահանումը երկրի սահմաններից դուրս:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՀՀ ԳԱԱ-ում քննարկվեց գիտական աստիճանաշնորհման նոր կանոնակարգի նախագիծը



2022 թ. դեկտեմբերի 23-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում գիտական հանրությունը ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեի նախագահ Կարեն Քեռյանի հետ քննարկեց «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 1997 թվականի օգոստոսի 8-ի N 327 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

«Գործող կարգում կան բազմաթիվ դրույթներ, որոնք իրար հետ համաձայնեցված չեն: Նոր կանոնակարգով վերացվում են այդ անհամաչափությունները»,- նշեց Կարեն Քեռյանը:

Փաստաթղթով նախատեսվում է կա-

տարել փոփոխություններ գիտական աստիճանաշնորհման կարգում չորս ուղղություններով:

ՕՁեկնաձուլական պաշտպանելուց մինչև մասնագիտական խորհրդի անդամ լինելու համար 2027 թվականից սկսած անհրաժեշտ կլինի ունենալ միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված պարբերականներում տպագրություններ: Նման տպագրությունները կդիտվեն համարժեք տեղական պարբերականներում տպագրված 2-3 հոդվածի:

Օ Արտերկրի մասնագետը հնարավորություն կունենա համադեկավարելու ասպիրանտներին ու հայցորդներին, բացի այդ՝ ընդգրկվելու մասնագիտական խորհուրդներում, ինչպես նաև առցանց

մասնակցելու պաշտպանության գործընթացին՝ որպես ընդդիմախոս:

Օ Կապահանջվի ներկայացնել կուտակած անհրաժեշտ կրեդիտների մասին տեղեկանք, նշել մասնագիտական խորհրդի միատի քվորումն ապահովելու համար նվազագույն անհրաժեշտ մասնակիցների մասնաբաժինը: Փորձարարական մասնագիտությունների դեպքում առանց համահեղինակների հոդված ունենալու պահանջը փոխարինվել է առաջին հեղինակով հոդված ունենալուն:

Օ Առաջատար կազմակերպության փոխարինում ընդդիմախոսով: Աստիճանաշնորհման գործընթացի տարբեր օղակներում մասնագետներին ներգրավելիս այլևս չշեղող չի դրվելու գիտությունների դոկտորի աստիճան ունենալու վրա, այլ կարևորվելու են բարձր գիտաշափական տվյալներ ունենալը և ակտիվ գիտական լինելը:

Քննարկման ընթացքում բարձրացվեց մասնագիտական խորհուրդների անդամների և գիտական ղեկավարների երիտասարդացման հարցը: «Մենք մոր մեխանիզմներ պետք է ներդնենք և հնարավորինս փորձենք երիտասարդացնել գիտական ղեկավարների տարիքը»,- ասաց

Կարեն Քեռյանը:

Անդրադարձ եղավ միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված պարբերականներում տպագրություններ ունենալու պահանջին:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Արթուր Իշխանյանը նշեց. «Հումանիտար հասարակագիտական ոլորտներում անգլալեզու հրապարակումների թիվն էապես պետք է ավելացնել աշխարհում մեր տեսանկյունից բարձրացման համար: Սա ազգային անվտանգության խնդիր է»:

ՀՀ ԳԱԱ նախագահի խորհրդական Ռադիկ Մարտիրոսյանը ներկայացրեց իր դիտարկումները նախագծի վերաբերյալ. «Նախագիծը ենթադրում է որակի բարձրացում, բայց որոշ դրույթներ իջեցնում են որակը: Հատկապես առաջատար կազմակերպության փոխարինումը՝ ընդդիմախոսով: Իմ կարծիքով՝ պետք է վերանայել այդ դրույթը: Նաև պետք է վերանայել գիտությունների դոկտորի աստիճանի հետ կապված դրույթը: Պետք է այդ աստիճանը պահպանել. գիտությունների դոկտորը պետք է թեկնածուից բարձր լինի»:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՄԵՐ ԹԵՐԹԻ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Այս տարի նշվելու է ՀՀ ԳԱԱ կազմավորման 80-ամյա հոբելյանը: Դա լավ առիթ է մեկ անգամ ևս արժևորելու հայոց գիտության կանաչի հարուստ պատմությունը, հանրայնացնելու գիտության տարբեր բնագավառներում նրա վիթխարի ձեռքբերումները և համաշխարհային գիտության մեջ հայ գիտնականների ծանրակշիռ ներդրումը: Դա առիթ է նաև վեր հանելու գիտության զարգացումը խոչընդոտող խնդիրները և ճշգրտելու զարգացման հեռանկարները:

Մեր երկրի առջև ծառացած են բազում մարտահրավերներ, սոցիալ-տնտեսական կյանքում առկա են չլուծված բազմաթիվ խնդիրներ, մենք հայտնվել ենք ներքին և արտաքին անվտանգային լուրջ հանգուցալուծումների շեմին: Տակավին առկախ է արցախյան հիմնահարցը, անորոշ են «ակադեմիական քաղաքի» սին գաղափարը և ընդհանրապես գիտության վաղվա օրը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ «Գիտություն» թերթի խմբագրությունը նպատակահարմար է գտնում ունենալ մեր խորագրով բաժին՝ «Մտքերի հարթակ»: ԳԱԱ համակարգի աշխատակիցները (և ոչ միայն) կարող են այս հարթակն օգտագործել իրենց առաջարկները, մտահոգությունները, խոհերն ու կարծիքները բարձրաձայնելու համար:

Ակնկալում ենք մեր գործընկերների թե՛ մասնագիտական և թե՛ քաղաքացիական առավել ակտիվ դիրքորոշումը. դժվարին այս ժամանակներում մեր գաղափարներով փորձենք օգտակար լինել կարևորագույն հարցերի լուծման՝ ազգային շահերից բխող իրատեսական ուղիների որոնման գործում:

«Գիտություն» թերթի խմբագրություն

ՄՏՔԵՐԻ ԸԱՐԹԱԿ

ՌԵՊԼԻԿ

ՈՐՏԵՂԻՑ Է ՂԵԿԱՎԱՐՎՈՒՄ ԸԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեն մեզ հրամցրել է գիտական աստիճանաշնորհման նոր կանոնակարգը: Այստեղ կարելի է վեճի առարկա դարձնել շատ բան, և դժվար չէ խոսք ու գրույց սարքել: Խուսափելով դրանից՝ նկատենք ամենաարտառոցն ու մերժելի, որ առաջադրվում է հայագիտությանը վերաբերող հոդվածներին: Պարզվում է, որ հայագիտական հոդվածների գիտականության աստիճանը չափվում է Հայոց աշխարհից դուրս միջօրեականներում:

Ճշտենք, ուրեմն, ո՞ւմ համար և որտեղ ի՞նչ է հայագիտությունը, և որտե՞ղ է հայագիտության կենտրոնը:

Պարզվում է, որ միջազգային գիտատեղեկատվական հանդեսներում ու շտեմարաններում է որոշվում հայագիտական հոդվածների ու աշխատությունների գիտական լինելը, որ այնտեղ ճարակությամբ հասցված մեկ հոդվածն այստեղ՝ հայագիտական կենտրոնում, երկուսի ու երեքի տեղ է անցնում:

Սա ի՞նչ է նշանակում, ԲՈԿ-ի հարգարժան պարունայք: Գիտե՞ք, որ եվրոպացի ու ամերիկյան հայագետները մեր գրածներով են հայ մշակույթը ճանաչում, մեր իմացածը պատմում են մեզ և ոմանց պատճառում «ծայրամասում» ապրողի ուրախություն, իսկ իմացողներին,

ունից արտագրում են, լուռ զայրույթ են պատճառում: Օրինակներ կարող են բերել, եթե պետք է: Երևանում տեղի ունեցած միջազգային հայագիտական գիտաժողովներում, սկսած անցյալ դարի 70-ական թվականներից, Արևմուտքից եկած որևէ հայագետ մեր միտք չի հայտնել, մեր փաստ չի բերել, մեր մեթոդ չի առաջադրել: Մեզ դուր են եկել նրանց իմացությունը, հայերեն խոսելը, բայց դա ոչ թե հայագիտություն է, այլ հայափրություն, մեկ ուրիշ դեպքում՝ հայամերժություն, երբ մի ամերիկահայ անգլիախոս գրում է, թե Հայաստանում հայերը երբեք մեծամասնություն չեն կազմել: Այլ օրինակ. ամերիկացի Փիթր Քաուն ճանաչված է հայ թատրոնի միջնադարյան շրջանի մասնագետ մեր չորս գրքերի հիման վրա և այդքանը: «Ես հղումներ եմ տալիս», ասում է: Ես էլ շնորհակալ եմ, ուրախ եմ, որ գրածս կարդացող հայասեր կա:

Այսպիսով, որտե՞ղ է հայագիտության կենտրոնը և որտեղի՞ց է ղեկավարվում: Խորհրդային ժամանակներում գոմե հայագիտությունը Մոսկվայից չէր ղեկավարվում: Ե՞րբ ենք հասկանալու, որ պետություն ենք մեր պատմությամբ, ներկայով ու ձգտումներով, որ գրելու ենք մեր լեզվով, թարգմանելու դեպքում՝ մեր ազգային շահերով ու նպատակներով:

Հենրիկ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՐՎԵՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՐՈՒՄՏ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱՅՈՒՒ ՀԱՍԱՆԵԼԻ Է ԹՎԱՆՇԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը հայ արվեստագիտության գլխավոր կենտրոնն է, միակ գիտական օջախը, որտեղ իրականացվում է հայ արվեստի բոլոր տեսակների ուսումնասիրությունը:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում է գործում հանրապետությունում եզակի Արվեստաբանական գրադարանը (վարի՜չ Գայանե Մեկրեկյան), որը 1964 թվականին հիմնարկեց ՀՍՄՀ ԳԱ արվեստի ինստիտուտի տնօրեն ակադեմիկոս Ռուբեն Զարյանը Հալեպից բերած շումերական, ասորական, իրանական և հունական արվեստներին նվիրված չորս գրքերով:

Գրադարանի հարուստ ու բազմազան ֆոնդը բաղկացած է արվեստի տարբեր ճյուղերին (ճարտարապետություն, կերպարվեստ, կինո, թատրոն, երաժշտություն, կիրառական արվեստ) առնչվող տարբեր լեզուներով (հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն և այլն) հրատարակություններից: Գրադարանի գրականությունը համակարգված է, կա ինստիտուտում հրատարակված գրքերի բաժին, ատենախոսությունների, սեղմագրերի, հազվագյուտ արտասահմանյան համարագիտարանների, բառարանների, տեղեկատվական բառարանների, արվեստի, կերպարվեստի, փիլիսոփայության, էսթետիկայի, ճարտարապետության, երաժշտության, կինոյի, թատրոնի, հնագիտության, գրականագիտության ու լեզվի, պատմության, պարբերական մամուլի բաժիններ:

Գրադարանն ունի գիտության ու մշակույթի երախտավորների նվիրաբերած անձնական գրադարանների հիման վրա ստեղծված՝ Լիդիա Դուրնովոյի, Միհրան Թումանյանի, Մարկ Գրիգորյանի, Հուրիկ Սուրուզյանի, Արամ Արամյանի անհատական ֆոնդերը, որտեղ պահպանվում է հազվագյուտ գրականություն՝ «Հուշարար», «Տարազ», «Գեղարվեստ», «Ազգագրական հանդես», պատարագներ, շարակնոցներ, երգարաններ և այլն: Գրադարանում կան հնատիպ գրքեր. բավական է նշել «Երաժշտական երգեցմունք հոգևորական: Շարակնոցը» (Կ.Պոլիս, 1742):

Իր գործունեության տասնամյակների ընթացքում Արվեստաբանական գրադարանը սպասարկել է ոչ միայն արվեստի ինստիտուտի և ԳԱԱ համակարգի մյուս ինստիտուտի աշխատակիցներին, հայցորդներին ու ասպիրանտներին, այլև հանրապետության արվեստի բուհերի դասախոսներին, ասպիրանտներին, հայցորդներին և բարձր կուրսերի ուսանողներին:

2022 թվականը դարձավ կարևոր հանգրվան Արվեստաբանական գրադարանի կենսագրության մեջ: ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Արթուր Իշխանյանի հանձնարարականով ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի աշխատակիցների ջանքերով՝ Տիգրան Զարգարյանի հմուտ ղեկավարությամբ, թվայնացվեց Արվեստաբանական գրադարանը, և հետայսու հայ արվեստով հետաքրքրվող ընթերցողները կարող են հայ արվեստագիտական գրականությունը ծանոթանալ Արվեստաբանական գրադարանի QR կոդի միջոցով կամ թվանշային գրադարանում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տիրույթ մուտք գործել հետևյալ հղմամբ՝ <https://arar.sci.am/dlibra/collectiondescription/13>:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ





Ի՞նչ ձեռքբերումներ և թերացումներ են եղել Հայաստանի գիտության ոլորտում 2022 թ., ինչպե՞ս է ազդել ֆինանսավորման ավելացումը գիտական ակտիվության վրա, և ի՞նչ մարտահրավերներ դեռ կան այս ոլորտում: Այս ամենի մասին NEWS.am TECH-ը զրուցել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Արթուր Իշխանյանի հետ:

Ակադեմիկոս-քարտուղարի խոսքով ֆինանսավորման ավելացումը շատ կարևոր է գիտության զարգացման համար, և դա անցած տարվա կարևորագույն ձեռքբերումներից է: Սակայն միայն դա բավարար չէ. օրենսդրական լուրջ փոփոխություններ և ոլորտի խորքային բարեփոխումներ են անհրաժեշտ՝ առանձնացնելով Հայաստանի համար գիտական ռազմավարական ուղղությունները:

Արթուր Իշխանյանը որպես դրական քայլ գնահատեց այն, որ տարեվերջին վերջապես քննարկման դրվեց «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին օրենքի» երկար սպասված փոփոխությունների նախագիծը: Այդ փոփոխությունները հստակեցնում են գիտական գործունեությանը վերաբերող որոշ տերմիններ, ինչպես նաև որոշ չափով հեշտացնում են գնումների ընթացքը գիտական հաստատությունների համար, ինչի անհրաժեշտության մասին երկար ժամանակ ակազանգուժ էին գիտական կազմակերպությունների տնօրենները:

Այս փոփոխություններով առաջարկվում է նաև Ակադեմիայի կառավարման խորհրդի ստեղծում, որում, Ակադեմիայի ղեկավարությունից բացի, պետք է ներառվի պետության լիազոր մարմնի, այսինքն՝ Գիտության կոմիտեի ներկայացուցիչ, ինչպես նաև՝ ներկայացուցիչ այլ գերատեսչությունից: Արթուր Իշխանյանի կարծիքով՝ սա լուրջ փոփոխություն է, որի արդյունքում Ակադեմիայի գործունեությունը կլինի ավելի կոհերենտ պետական այլ կառույցների գործունեության հետ:

2022 թ. շրջանառության մեջ են դրվել մի շարք այլ կարևոր փաստաթղթեր, որոնք վերաբերում են Բարձրագույն որակավորման կոմիտեի գործունեությանը, մասնավորապես գիտական աստիճանաշնորհման կանոնակարգին:

Սակայն, ինչպես նշեց Արթուր Իշխանյանը, չնայած ձեռնարկված մի շարք դրական միջոցներին, 2022 թ. ավարտին գիտական գործունեության ամփոփումը ցուցանիշների անկում է գրանցել, և դա երկրի 30-ամյա ընթացքի օբյեկտիվ արդյունքն է:

«Անկումը պայմանավորված է նրանով, ինչի մասին անընդհատ զգուշացվել է դեռ 10 տարի առաջ: Շատ պարզ պատճառով. գիտական կադրերի տարիքային բաշխման կորում ունենք երկու զագաթ՝ երիտասարդների և տարեցների: Երիտասարդների զագաթը մնում է անփոփոխ, որովհետև երիտասարդները գալիս են, հետո լքում ուլորտը: Իսկ տարեցների զագաթը շարունակաբար տեղաշարժվում է դեպի ավելի մեծ տարիքային տիրույթ և ապրում է ընդհանուր թվի անկում՝ հասկանալի պատճառներով: Քանի որ գիտական արդյունքի մեծ մասը տալիս են մեծահասակները, իսկ նրանց թիվը տարեցտարի պակասում է, ապա

ցուցանիշների անկումը բնականոն սպասելի էր», - ասաց Արթուր Իշխանյանը:

Դրա հետևանքով մախորդ տարվա գիտության ֆինանսավորման թոնջքածն աճը (ՀՆԱ 0,23% -ից հասնելով ՀՆԱ 0,51%-ի) կարծես թե չի արտահայտվում: Ֆինանսավորման աճը հանգեցրել է աշխատավարձերի բարձրացման, լաբորատորիաների նորոգման, նոր սարքավորումների գնման, բայց նոր մարդկանց շատ չի բերել դեպի գիտություն, քանի որ բավարար քանակով ուսանողներ չկան:

«Այսինքն՝ մեծ ներարկում է արվել գիտության մեջ, բայց կոնկրետ այս տարի մենք գրանցում ենք արագացված անկում: Այդ անկումը հետևանք է երկար տարիների բարձրորդի վիճակի, և հարց է ծագում. անցե՞լ ենք մենք արդյոք անդամալիության կետը: Ես սա ցավով եմ հարցնում: Ես հույս ունեմ, որ այս տարի վիճակը զոմե կկայունանա: Աճ չէի ենթադրում, բայց անկումն այս տարի ավելի մեծ է, քան անցյալ տարի, այսինքն՝ այդ ներարկումներն առայժմ շոշափելի արդյունք չեն տվել. ընդհանուր մակրոպատկերն ասում է, որ վիճակը լավ չէ, քանի որ գիտական զգալի արդյունք տվողների քանակն անբավարար է», - ասաց նա:

Հայաստանում 1 մլն բնակչության հաշվով 1300 գիտաշխատող կա, ինչն էապես ցածր է համաշխարհային միջին ցուցանիշից: «Բայց, հաշվի առնելով մեր աշխարհաբաղաբական վիճակը, եթե մենք արևի տակ ուզում ենք տեղ ունենալ, ապա աշխարհի միջինից պիտի էապես բարձր թիվ ունենանք: Պետք է գիտաշխատողների թիվը մոտավորապես 3-4 անգամ ավելացնենք: Չորս հազար գիտնականը պետք է դառնա 12000: Հարց է ծագում. այդ 8000-ը որտեղի՞ց վերցնել», - ասաց նա:

Ակադեմիկոս-քարտուղարի խոսքով անբավարար քանակությամբ ասպիրանտական տեղեր են տրամադրվում, բայց անգամ այդ քիչ տեղերը թափուր են մնում: Նա բերեց ֆիզիկայով զբաղվող ինստիտուտների օրինակը: Եթե ինստիտուտի գաղափարախոհողների թիվը դիցուք 100 է, ապա տարեկան 1-2 ասպիրանտ ընդունելով (այդքան տեղ է հատկացվում ամեն ինստիտուտի), ամբողջական սերնդափոխության համար «կապահանջվի հավերժություն»: Տեսանելի ժամանակում սերնդափոխության համար ֆիզիկայի ոլորտում պահանջվում է տարեկան առնվազն 4-5 անգամ ավել ասպիրանտ, բայց նրանք ուղղակի չկան:

Արթուր Իշխանյանը հիշեցրեց, որ գիտնականների զանգվածային արտահոսքը երկրից և գիտությունից դեպի այլ ոլորտներ սկսվել է դեռ անցած դարի 90-ականներին: Վերջին տարիներին ֆիզիկոսներն ու մաթեմատիկոսներն ավելի շատ համալրում են ՏՏ ոլորտը, իսկ գիտությամբ զբաղվել ցանկացողները լքում են երկիրը:

Գիտնականներն զգուշացրել են այս վիճակի վտանգավորության մասին դեռ 10-15 տարի առաջ: Եվ 10 տարի առաջ, ըստ Իշխանյանի, դեռ հնարավոր էր փրկել իրավիճակը: Այն ժամանակ ակտիվ աշխատող գիտնականները 50-60 տարեկան էին, ավելի շատ ուսանողներ, ասպիրանտներ ունեին, իսկ այսօր արդեն 60-70 տարեկան են, և շուտով չեն կարողանա ասպիրանտների ղեկավարել: Բացի այդ, այն ժամանակ երկիրը լքած իրենց աշակերտներին դեռ հնարավոր էր հետ բերել՝ համապատասխան ծրագրի իրականացման դեպքում:

Անցյալ տարվանից Գիտության կոմիտեն նման ծրագիր իրականացնում է, բայց այդ ծրագրով Հայաստան է բերվել ընդամենը հինգ երիտասարդ գիտնական, իսկ դա շատ քիչ է՝ բեկումն մտցնելու համար: Գիտկոմի կողմից ֆինանսավորվող նախագծերում այս տարվանից կարելի է ընդգրկել նաև բակալավրիատի որոշ ուսանողների (մինչ այս թույլատրվում էր ներգրավել միայն մագիստրոսներին) և

նորմալ աշխատավարձ վճարել, բայց ուսանողների թիվը բնագիտական ֆակուլտետներում շատ քիչ է:

Այսօր անկումը կասեցնելու համար, ըստ Արթուր Իշխանյանի, անհրաժեշտ են շտապ, ոչ տրիվիալ և արտակարգ քայլեր: Օրինակ՝ դեռ 44-օրյա պատերազմի ժամանակ նա առաջարկել էր բնագիտական առարկաներից բարձր առաջադիմություն ունեցող բոլոր ուսանողներին բոլոր ֆակուլտետներից տեղափոխել բնագիտական ֆակուլտետներ՝ տալով նրանց բարձր կրթաթոշակ:

2022 թ. ընթացքում ԳԱԱ ղեկավարությունը հանդես է եկել նաև Ակադեմիայի կառուցվածքի բարեփոխման մի շարք նախաձեռնություններով՝ կառույցի աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու համար:

Ակադեմիայում սպասում են կառավարության պատասխանին մի շարք առաջարկությունների վերաբերյալ:

Այսպես, ի լուծումն ակադեմիայի անդամների ծերացման խնդրի, ԳԱԱ ղեկավարությունն առաջարկում է շտապ նոր ընտրություններ կազմակերպել, ընդ որում՝ միջազգային շատ բարձր չափանիշներով, և սահմանելով տարիքային վերին շեմ, և այսպիսով երիտասարդացնել ԳԱԱ անդամների կազմը:

Հաջորդ առաջարկը՝ ԳԱԱ Կանոնադրության փոփոխությունն է, որը նաև հնարավորություն կտա միավորել ԳԱԱ որոշ բաժանմունքներ:

«Հիմնավորման մեջ ասված է, որ աշխարհաբաղաբական այս վիճակում անհրաժեշտ է, որպեսզի բաժանմունքները լինեն, պատկերավոր ասած, ռեակտորներ, որտեղ տեղի կունենան նոր գաղափարների գեներացում, պետական կարևորության ծրագրերի մշակում: Ակնհայտաբար, ներկայում արվող բավարար չէ: Մեզ պետք են նոր ընտրություններ, որպեսզի կազմը համալրվի, ու կարողանանք անել էապես ավելին», - ասաց նա:

Շատ են խոսակցությունները նաև այն մասին, որ ակադեմիական համակարգն ուռճացված է, Հայաստանին հարկավոր չեն նույն գիտակարգով զբաղվող այդքան տարբեր ինստիտուտներ և այլն, և անհրաժեշտ է օպտիմալացում: ԳԱԱ ղեկավարությունում համաձայն են, որ անհրաժեշտ է օպտիմալացում, և մշակել են ռազմավարություն, համաձայն որի՝ մի շարք ինստիտուտների միավորումով պետք է ստեղծվեն ութ գիտական խոշոր կենտրոններ՝ Հայաստանի համար ռազմավարական մշտականություն ունեցող գիտական ուղղություններով:

Բոլոր այս առաջարկները մախորդ տարվա ընթացքում պատշաճ կերպով ուղարկվել են կառավարություն, բայց պատասխան քայլեր, ցավոք սրտի, դեռ չկան: Հայտնի է, որ կառավարությունում քննարկվում է այլ առաջարկ՝ գիտական ինստիտուտները րապալի մասին. միավորել դրանք բուհերի հետ: Բայց նման քայլը Արթուր Իշխանյանը վաղաժամ և վտանգավոր է համարում. բուհերին միանալուց հետո ինստիտուտները կկորցնեն ինքնուրույնությունը, և դա կարող է դեգրադացնել գիտական ողջ համակարգը: Նրա խոսքով՝ Ակադեմիայում այս հարցով կառավարության հետ կառուցողական երկխոսություն ծավալելու հույս ունեն:

Արթուր Իշխանյանը շեշտեց, որ Ակադեմիայում քաջ գիտակցում են երկրի ներկա վիճակը, և այն, որ կառավարությունը շատ այլ հրատապ խնդիրներ ունի լուծելու, առաջին հերթին՝ անվտանգային: Բայց, հիշեցրեց նա, գիտության և տեխնոլոգիաների զարգացումն ի վերջո ևս երկրի անվտանգության հարց է, և մեր վիճակն այս հարցում այժմ վատնում է, այնպես որ, անհապաղ միջոցներ են անհրաժեշտ: «Փիլիսոփայորեն, այս արևի տակ այն ազգը, որը չի արարելու, չի լինելու», - ասաց նա:

ԸԸ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի նոր մշակումը

ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի Ֆոտոնիկայի լաբորատորիայում օպտիկական բեւեւյան փնջի տեխնիկայի և $\text{LiNbO}_3:\text{Fe}$ բյուրեղի հիման վրա մշակվել և իրականացվել են ֆոտովոլտայիկ լավիտներ (tweezers) միկրո- և մանոօբյեկտների գերման և ղեկավարվող տեղաշարժման համար: Մշակված լավիտներն ունեն չիպ-սանդղակ (chip-scale), ինքնավար ռեժիմում աշխատելու ունակություն և հեռանկարային են որպես lab-on-a-chip սարքեր:

«Մեր մոտեցման նորույթը բյուրեղի լուսավորման համար միլիվատային հզորությամբ անընդհատ, չտարամիտվող օպտիկական բեւեւյան փնջի կիրառման մեջ է, որն ունի միկրոմետրական պարբերությամբ կոնցենտրիկ օղակների լուսային պատկեր: Սա հանգեցնում է բյուրեղի ծավալում և նրա մակերևույթի վրա էապես բարձր կոնտրաստով երկչափ (2D), միկրոմետրական պարբերությամբ ֆոտովոլտայիկ դաշտերի բաշխվածության ձևավորմանը ($\sim 10^7$ Վ/մ-ը գերազանցող)՝ այսպիսով ապահովելով միկրո/մանոօբյեկտների և լուծույթներում դիսպերսված մանոմասնիկների արդյունավետ 2D գերումը և ղեկավարվող տեղաշարժումը», - ասաց գիտական խմբի ղեկավար, ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի Ֆո-

տոնիկայի լաբորատորիայի ղեկավար, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Ռաֆայել Դրամփյանը: Նա նշեց, որ մշակված ֆոտովոլտայիկ լավիտների յուրահատկությունն այն է, որ ֆոտովոլտայիկ դաշտերը բյուրեղում պահպանվում են շատ երկար՝ մինչև մեկ տարի, բյուրեղի փոքր հաղորդականության շնորհիվ՝ այսպիսով ապահովելով ինքնավար ռեժիմում աշխատող չիպ-սանդղակի (chip-scale) լավիտներ:

Հետազոտություններն իրականացվել են բազային ֆինանսավորման և, մասամբ, Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի A-2130 ծրագրի շրջանակներում: «Ֆոտովոլտայիկ լավիտների մշակմանը նպաստել են նաև ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի ֆոտոնիկայի լաբորատորիայի լայն միջազգային կապերը՝ Կանադայի Լավալի համալսարանի, Բելգիայի Գենտի համալսարանի, Գերմանիայի Մյունստերի համալսարանի, Ֆրանսիայի Ֆրենչ-Կոմտեի համալսարանի, Իտալիայի Սինեայի և Պադովայի համալսարանների հետ համագործակցությունը», - ասաց Ռաֆայել Դրամփյանը:

«Ստացված գիտական արդյունքները և lab-on-a-chip ֆոտովոլտայիկ լավիտների մշակումը մեծ հետաքրքրություն են առաջացրել հատկապես երեք գիտական կենտրոն-

ներում՝ Department of Applied Physics and Photonics, Vrije Universiteit Brussels (Belgium), Universite Laval, Department of Physics, Engineering Physics and Optics (Canada) և Complutense University of Madrid (Spain), որոնց հետ երկայնում նախապատրաստվում է համատեղ գիտական նախագիծ՝ եվրոպական կամ միջազգային որևէ գիտական ծրագրի ներկայացնելու համար», - ասաց Ռաֆայել Դրամփյանը:

Իրականացված հետազոտություններին և հրապարակված հոդվածի պատրաստման աշխատանքներին մասնակցել է երիտասարդ գիտնական, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Լուսինե Շառուկյանը:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին



ՀՀ ԳԱԱ Լևոն Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրվեց Նաիրա Այվազյանը

2022 թ. դեկտեմբերի 21-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության նիստում ՀՀ ԳԱԱ Լևոն Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնում միաձայն վերընտրվեց կենսաբանական գիտությունների դոկտոր Նաիրա Այվազյանը:

Նաիրա Այվազյանը ծնվել է 1973 թ. Երևանում: 1995 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի կենսաբանական ֆակուլտետը: 2002 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը, 2015 թ.՝ դոկտորական ատենախոսությունը: Նաիրա Այվազյանի մասնագիտական հետաքրքրություններն ընդգրկում են կենսաֆիզիկան, կենսաքիմիան, ֆիզիոլոգիան, ռադիոկենսաբանությունը: Նա 140 տպագիր աշխատանքի, այդ թվում 1 ուսումնամեթոդական գրքի հեղինակ է:

1996-2011 թվականներին նա աշխատել է Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետի կենսաֆիզիկայի ամբիոնում՝ լաբորանտից մինչև ավագ գիտաշխատող: 2010-2012 թվականներին եղել է ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի գիտության տեղեկատվության վերլուծության և մոնիթորինգի կենտրոն-լաբորատորիայի վարիչը: 2011-2012 թվականներին ՀՀ ԳԱԱ Լևոն Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի թունաբանական հետազոտությունների լաբորատորիայի ղեկավարն էր: 2012 թվականին ընտրվել է ՀՀ ԳԱԱ Լևոն Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնում:

Նաիրա Այվազյանը Թունաբանության միջազգային միության Եվրոպական սեկցիայի նախագահն է, Համահայկական կենսաֆիզիկական ասոցիացիայի փոխնախագահը: Անդամակցում է Եվրոպական կենսաքիմիական կազմակերպությունների ֆեդերացիային, Եվրոպական կենսաֆիզիկական կազմակերպությունների ասոցիացիային: Նա Toxicon (Elsevier) միջազգային համդեպի խմբագրական կազմի և Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Կենսաֆիզիկայի 051 մասնագիտական խորհրդի անդամ է:

Ներկայացնելով ՀՀ ԳԱԱ Լևոն Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի գործունեությունը՝ Նաիրա Այվազյանը նշեց, որ ինստիտուտն ընդլայնել է իր գիտական ուղղվածությունը: Իրականացվում են մի շարք դրամաշնորհային ծրագրեր: Ինստիտուտին կից գործում է Հայկական ֆիզիոլոգիական ընկերությունը և Ուղեղի հետազոտությունների միջազգային միության Հայաստանյան մասնաճյուղը: «Հորիզոն Եվրոպա» գիտական ծրագրի շրջանակներում ինստիտուտում հիմնվելու է գերազանցության կենտրոնը:



ՀՀ ԳԱԱ Գագիկ Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրվեց Խաչատուր Մայրապետյանը

2022 թ. դեկտեմբերի 21-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության նիստում ՀՀ ԳԱԱ Գագիկ Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրվեց կենսաբանական գիտությունների թեկնածու Խաչատուր Մայրապետյանը:

Խաչատուր Մայրապետյանը ծնվել է 1969 թ. Կանո քաղաքում: 1992 թ. ավարտել է Երևանի բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետը: 1992-1993 թթ. սովորել է ՀՀ Կոտայքի շրջանային կենտրոնական հիվանդանոցի ինտերնատուրայում՝ «ընդհանուր պրակտիկայի բժշկ» մասնագիտությամբ, 1993-1995 թթ.՝ Ի. Սեչենովի անվան Մոսկվայի բժշկական ակադեմիայի ոչ ավանդական բժշկության և ֆիզիոլոգիայի ամբիոնի օրդինատուրայում:

2002-2006 թվականներին զբաղեցրել է ՀՀ ԳԱԱ Գագիկ Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտի գիտական արդյունքների ներդրման գծով փոխտնօրենի պաշտոնը, իսկ 2006 թվականից՝ ինստիտուտի տնօրենի պաշտոնը:

Խաչատուր Մայրապետյանի գիտական նախասիրություններն ընդգրկում են դեղատու և եթերայուղատու բույսերի անհող մշակույթի ֆիզիոլոգիկենսաքիմիական ու դեղաքիմիական հիմունքների և հիդրոպոնիկ արտադրության կենսատեխնոլոգիաների մշակում, ջերմատնային հիդրոպոնիկա: Նա իրականացրել է արժեքավոր դեղաբույսերի և համեմունքային մշակաբույսերի լայնամասշտաբ՝ արտադրական փորձարկումներ, Արարատյան դաշտի պայմաններում բույսերի հիդրոպոնիկ մեծաքանակ արտադրության տնտեսական արդյունավետության գնահատում, դեկորատիվ ծառափառտեսակների և խաղողի հիդրոպոնիկ եղանակով տնկիների աճեցման գիտական հիմունքների բացահայտում, հիդրոպոնիկ և հողային բույսերում ծանր մետաղների և արհեստական ռադիոնուկլիդների կուտակման բնույթի բացահայտում և գնահատում հող-ջուր-բույս ու լցանյութ-սննդալուծույթ-բույս համակարգերում:

Խաչատուր Մայրապետյանը 46 գիտական հոդվածի և թեզիսի հեղինակ է, ստացել է հիդրոպոնիկ նոր, ժամանակակից համակարգերի վերաբերյալ 4 գյուտի արտոնագիր:

ՀՀ ԳԱԱ նախագահության նիստում Խաչատուր Մայրապետյանը ներկայացրեց ինստիտուտի նվաճումները, խնդիրներն ու հեռանկարները:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին



Ծանրակշիռ ներդրում աղվանագիտության բնագավառում

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը լույս է ընծայել պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալեքսան Զակոբյանի «Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках» գիտական արժեքավոր աշխատությունը:

Ալեքսան Զակոբյանի՝ գիտական հանրությանը ներկայացված ռուսերեն գիրքը թեպետ կոչված է երկրորդ հրատարակություն, բայց, անշուշտ, նոր քայլ է Կովկասյան Աղվանքի ու նրան հարող՝ հայոց Արցախ և Ուտիք նահանգների հետազոտության ոլորտում: Այն նաև հեղինակի անցած գիտական երկար ուղու հանրագումարն է: Առաջին անգամ չէ, որ գրախոսվում են Ա. Զակոբյանի հետազոտությունները: Դրանց մեջ առաջնեկներից է գերմանացի բուլղարագետ Հանս Դիտտենի և իմ կողմից՝ «Klio» ամսագրում տպագրված գերմաներեն ընդարձակ գրախոսությունը, որի լույսընծայումը հնարավոր եղավ Բեռլինի պատի փլուզումից հետո. տես Klio, 1990, № 1 (72), էջ 347-355:

Այս մենագրության դեռևս առաջին հրատարակությունը (1987 թ. դեկտեմբերին) Արցախյան համազգային շարժման նախօրյակին) նոր արահետներ բացահայտեց Կովկասյան Աղվանքի անտիկ և վաղ միջնադարի պատմության, ինչպես նաև Մովսես Դավթյանի «Պատմություն Աղվանից»-ի քննական հետազոտության բնագավառում: Ներկա լրանված հրատարակությունը հեղինակի ավելի քան երեսնամյա աշխատանքների ամփոփումն է: Գիրքը տպագրված է Արցախի Հանրապետության ԿԳՄՍ նախարարության և Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի մեկենասությամբ: Հեղինակը նվիրել է այն իր «գիտական ու քաղաքական մարտա-

կից» ընկեր և «Ուռնեմի» հայագիտական մատենաշարի նախածեղնող, «Ղարաբաղ» կոմիտեի անդամ Համբարձում Գալստյանի հիշատակին:

Արդի պատմագրության տեսանկյունից քննարկվող հարցերը լիակատար պատկերացնելու միտումով Ա. Զակոբյանը հետազոտության նյութ է դարձրել անտիկ շրջանի և վաղ միջնադարի խնդիրները՝ շեշտադրելով տարբեր դարաշրջաններում «Աղվանք» և «աղվաններ» եզրույթների քննությունը, որն ինքնին տարաբնույթ պատմա-քանասիրական, պատմաաշխարհագրական, ազգագրական հարցադրումներ է պարունակում: Նա խոստովանում է նաև, որ վերջին երկու տասնամյակներին Բուս Աղվանքի և Հայոց Արևելից կողմանց երկր-քաղաքական պատմության հետազոտմանը զուգահեռ՝ իր ուշադրությունը սեղծել է մատենագրական աղբյուրների գիտա-քննական բնագրերի հրատարակման վրա: Աղբյուրագիտական հետազոտությունների այդ էապես նոր ծավալը հնարավորություն է տվել նրան՝ ազգագրական տեսական հեմքի վրա նորովի գնահատել և ամփոփել մեր աղվանագիտական գիտելիքները:

Մենագրության 3 զուլաներում և 12 բաժիններում բազմակողմանիորեն հիմնավորվում է այն գլխավոր միտքը, որ Աղվանքում այդպես էլ չկազմավորվեց միասնական եթոս «աղվան» անունով, և վերջինս մնաց լոկ մետաթնոսի անվանում ու հավաքական արտանուն: Այսպես՝ անտիկ աղբյուրներում «Albania» եզրույթը վերաբերում էր Ք. ա. I դարասկզբին ձևավորված Աղվանից թագավորության տարածքին, որը գտնվում էր Կուր գետի ձախ ափին, Ալազան վտակից մինչև Դերբենդի լեռնանցքը և Կասպից ծով, իսկ «Albani» եթոսանունով նշվում էր նրա ամբողջ

բնակչությունը, որը բաղկացած էր առանձին լեզուներ ունեցող 26 ցեղերից (լեզ-դեկեր, սիլվ-միդեր, լուպենի-լիմեներ ևն): Ք. հ. III դարում Աղվանից թագավորությունից դուրս է եկել նրա արևելյան, ծովափնյա կեսը, ինչից հետո այդ տարածքի բնակիչներին աղբյուրներն այլևս չեն անվանում «աղվաններ». դա ցույց է տալիս, որ III դարում 26 ցեղերը դեռ չէին համախմբվել միասնական եթոսի մեջ՝ «աղվաններ» եթոսին միակ է վերջինս նրանց տալիս էին հարևանները՝ միայն որպես «Աղվանք» քաղաքական միավորի բնակչության հավաքական անվանում: Վաղ հայկական երկրներ ևս «Աղվանք» եզրույթով («Ալբանիա», «աղվաններ») նշվում էր Աղվանից թագավորության տարածքը Կուրի և Կովկասյան լեռների միջև, ինչպես նաև այդ տարածքի բնակչությունը: Սակայն 428 թ. Սասանյանների վերացրեցին Մեծ Հայքի Արշակունյաց թագավորությունը և Այսրկովկասում ստեղծեցին 3 մարզպանությունների համակարգ՝ «Հայք», «Վիրք» և «Աղվանք» («Առան») անուններով՝ վերջինի կազմում ներառելով ոչ միայն Աղվանից թագավորությունը, այլև Կուրի աջ ափին գտնվող Ուտիք և Արցախ հայկական նահանգներն ու անտիկ Ալբանիայի ծովափնյա շրջանը. մարզպանության կենտրոն դարձավ Չոդ-Դերբենդը, սակայն VI դ. սկզբին այն տեղափոխվեց աջափնյա նորակառույց Պարտավ քաղաք: Նշված վարչա-քաղաքական փոփոխությունների արդյունքում «Աղվանք» անվանումն անցավ նաև Կուրի հայկական աջափնյակին, և դրա հետ կապված՝ V դարի վերջերին Հայոց պատմական ավանդություն հայտնվեց եզրույթի նոր իմաստը. հայ մատենագիրները «Աղվանից աշխարհ» ասելով սկսում են հասկանալ մարզպանության

ողջ տարածքը՝ Երասխից մինչև Դերբենդ: Մովսես Խորենացին մույնիսկ բացատրում է երկրի հայկական ու իրանական անվանումների՝ «Աղվանք» և «Առան» եզրույթների ծագումը հայկական աջափնյակի հողի վրա՝ առաջինը կապելով հայերեն «աղու» («մեղմ») ածականի, իսկ երկրորդը՝ հայոց նահապետ Հայկից սերող Առան կուսակալի անվան հետ: Սա ցույց է տալիս, որ մինչև V դարավերջ ևս Բուս Աղվանքում չէր ավարտվել բազմացեղ բնակչության համախմբումը միասնական եթոսի մեջ, և հենց որ «Աղվանք» անվանումը տեղափոխվեց նաև աջափնյակ, հնարավոր դարձավ նրա ծագումը բացատրել Արցախ-Ուտիքի լեզվա-մշակութային հողի վրա՝ առանց ծախսափնյակի որևէ եթնիկ խմբի ինքնասիրությունը վիրավորելու վախի:

Ա. Զակոբյանի աշխատանքն ամբողջացնում են Հավելվածները՝ նրա «Վաչագանի վեպ»-ը և Արշակունեաց թագավորութան խնդիրը Դ-2 դարերի Աղվանքում» հիմնարար հոդվածի հատվածային թարգմանությունը, Աղվանից IV-XII դդ. կաթողիկոսացանկը, Մովսես Դավթյանից երկի ձեռագրերի ճյուղագրությունը, գրականության ընդարձակ ցանկը, անձնանունների, հեղինակների ու տեղանունների ցանկերը և երկու քարտեզներ:

Այսպիսով, հեղինակը լուծել է իր առջև դրված հիմնական խնդիրները և, անկասկած, լրացրել այն բացերը, որ դեռ գոյություն ունեն այս խիստ արդիական դարձած աղվանագիտության բնագավառի ուսումնասիրության ոլորտում:

Ազատ ԲՈՁՈՅԱՆ
**Պատմական գիտությունների
դոկտոր**

«Իրանական մշակութային ժառանգությունը Հարավային Կովկասում»



ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտում տարեկան ընթացիկում տեղի ունեցավ «Իրանական մշակութային ժառանգությունը Հարավային Կովկասում» խորագրով աշխատաժողով:

Աշխատաժողովը բացեց ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն Ռոբերտ Ղազարյանը: «Հարավային Կովկասի տարածաշրջանի երկու բնիկ ժողովուրդները՝ հայերն ու իրանցիները, նրանց ստեղծած քաղաքակրթությունները հազարամյակների փոխառնությունների պատմություն ունեն: Մեր տարածաշրջանում իրանական քաղաքակրթության ազդեցությունն ակնհայտ է:

Այսօր աշխարհում այնպիսի գործընթացներ են ընթանում, երբ որոշ պետություններ, որոշ ժողովուրդներ փորձում են յուրացնել ուրիշ պետությունների, ուրիշ ժողովուրդների մշակույթը, քաղաքակրթությունը: Այս գործընթացները մեր տարածաշրջանում նույնպես ակնհայտ են: Ադրբեջանը փորձում է խեղաթյուրել, յուրացնել, սեփականաշնորհել ոչ միայն հայերի և իրանցիների պատմությունը և մշակութային ժառանգությունը, այլ նաև այլ բնիկ ժողովուրդների՝ վրացիների, իրանախոս ժողովուրդների, Ավանցի ժառանգորդներ համարվող կովկասյան որոշ ժողովուրդների մշակույթը և ժառանգությունը: Դրանով այդ երկիրը փորձում է հնացնել իր պատմությունը: Իհարկե, սա անընդունելի է մեզ համար: Մենք պետք է միավորենք մեր ջանքերը և փորձենք հակադարձել այդ քաղաքականությանը, որն արվում է պետական մակարդակով», - ասաց Ռոբերտ Ղազարյանը:

ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Աբբաս Բադախշան Ջոհուրին նշեց, որ հայերն ու իրանցիներն ունեն շատ ընդհանրություններ ինչպես աշխարհագրական, այնպես էլ մշակութային ու պատմական: «Աշխարհագրորեն հայկական մշակութային ու պատմական ժառանգությունը տարածված է նաև Հայաստանի Հանրապետության քաղաքական սահմաններից դուրս, իսկ Հեռավոր Արևելքից մինչև Եվրոպայի սիրտն ընդգրկող այս մեծ աշխարհագրական տարածքում կան իրանական պատմական և քաղաքակրթական ժառանգության մոտիկներ: Այդ ժառանգության բազմաթիվ մոտիկներ կան նաև Հարավային Կովկասում: Իրանական այդ ժառանգության մի մասը դեռ պահպանված է, սակայն մի մասը տարբեր պատճառներով ենթարկվել է ոչնչացման կամ աղավաղման:

Ցավոք, երկար ժամանակ մենք ականատես ենք եղել տարածաշրջանի ժողովուրդների պատմական փաստերը խեղաթյուրելու կամ նույնիսկ մշակութային ժառանգությունը ոչնչացնելու փորձերի: Այս ջանքերը թիրախավորել են տարածաշրջանի բնակիչների թե՛ նյութական և թե՛ ոչ նյութական ժառանգությունը:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նման գործողությունների ակունքներին, մեթոդներին և նպատակներին: Մենք պետք է գիտակցենք այդ առնչությամբ մեր պարտականությունները և ձեռնարկենք համապատասխան քայլեր», - ասաց Աբբաս Բադախշան Ջոհուրին:

Դեսպանը նշեց, որ այլ ժողովուրդների ժառանգությունը ժխտելը կամ խեղաթյուրելը հաճախ ուղեկցվում է վտանգավոր քաղաքական նպատակներով: «Մշակութային ժառանգությունն ավելի լավ ճանաչելու ջանքերը, հավանաբար, կհանգեցնեն այդ ժառանգության փաստագրմանը և հիմք կհանդիսանան առավել խորն ուսումնասիրությունների իրականացման, խեղաթյուրման, կանխարգելման և մշակութային ժառանգության պահպանման շուրջ կոնսենսուսի հասնելու համար հող նախապատրաստելուն: Այս արժեքավոր գիտաժողովը պետք է առաջին քայլը լինի այս կարևոր ճանապարհին: Մենք պետք է ամենքս ավելին, որպեսզի ճանաչենք մեր ժառանգությունը, փաստագրենք այն և փորձենք պահպանել», - ասաց Աբբաս Բադախշան Ջոհուրին:

Իրանի Մեջլիսի հայազգի պատգամավոր Կարեն Խանլարյանը նշեց, որ երկու պետությունների փոխադարձ համագործակցության հիմքը հենց մշակութային ճանաչողությունն է:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի վարիչ Գոհար Իսկանդարյանը նշեց. «Ամենօրյա աշխատանքի շնորհիվ հնարավոր է լուծել ծառացած առկա խնդիրները: Այս աշխատաժողովը նոր լույս կսփռի Հայաստան-Իրան բազմադարյա հարաբերությունների վրա: Կքննարկենք Կովկասում առկա իրանական հուշարձանների պահպանության անհրաժեշտությունը, կխոսենք Ադրբեջանի կողմից այդ հուշարձանների սեփականացման փորձերի մասին»:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

Հայաստանի գրողների միության անդամ, գրող-իրապարակագիր, թարգմանիչ, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող Արտակ Վարդանյանը հրատարակել է իր՝ տարբեր տարիների էսսեների ընտրամին:

Գրքի առաջաբանի հեղինակը՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Գալստյանը, իր սեղծ խոսքում ճշգրտորեն տվել է «Հոգու և կարոտի ճամփաներով» խոհագրության գնահատականը՝ այն անվանելով հոգեբուխ:

Այս գիրքն իր ասելիքով նույնքան խորունկ է, որքան Համո Սահյանի հանձարեղ «Իրիկնահաց» պարզ, սակայն խոր փիլիսոփայությամբ գրված բանաստեղծությունը: Ովքե՞ր են Արտակ Վարդանյանի խոհագրությունների հերոսները: Գիրքը բացվում է Թեբուր տառի անմոռաց կերպարով, որի հետ հուշ է դարձել նաև գրողի ծննդավայր Նախիջևանի Ազնաբերդ գյուղը: Գրքում Ազնաբերդի, Նախիջևանի, Անիի և Մեծ Հայքի այլ բնակավայրերի կորուստները, հատկապես ադրբեջանցիների վայրագությունների հետևանքով հայկական բնիկ գյուղերում ու քաղաքներում հայկական վանքերի, խաչքարերի բարբարոսական ոչնչացումը ներկայացվում է

ԱՋՆԻՎ ՀՈՒՋՄՈՒՆՔՆ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ՄԵԿ ԳՐՔՈՒՄ

փաստացի: Դա են հաստատում նաև գրողի հետևյալ ցնցող տողերը.

Իմ մեծ մոր ծերացած մարմինը

Անշիրիմ ննջում է

Մեր տոհմի հին շիրմատանը...

Վայոց ձորի խաչիկ գյուղը շատ մոտ է Նախիջևանին, և այդ գյուղում էլ ծնվել են գրողի խոհերը՝ կապված այլևս ընդմիշտ կորած ծննդավայրի հետ:

Արևմտահայաստանը, որը մեզանում կոչվում է նաև Երզիր (Երկիր), նույնպես պատկերված է գրքում՝ իր ներկա իրականությամբ: Հատկապես այն մտավորականները (ես չեշտում եմ մտավորական բառը), որոնք այցելել են Արևմտյան Հայաստան ու Կիլիկիա, կվերապրեն գրքում պատկերված նույն զգացումները: Մեզ համար այնքան հարազատ Կարսը՝ հանձարեղ Հարենցի ծննդավայրը, հատկապես ցավալիորեն խոցում է ամենուր ծածանվող թուրքական դրոշմներով ու Աթաթուրքի նկարներով: Սա այն Աթաթուրքն է, որի հրամանով, ինչպես վկայում է Ֆրանսիացի նշանավոր հայագետ Ժան-Պիեռ Մահեն, 1915-ի հայերի ցեղասպանությունը վերապրած 900.000 հայերի դարձրեց թուրք: Իսկ մեզ այնքան մոտ գտնվող Երբեմնի տիեզերահռչակ Անիի ավերակներն այնպիսի հույզեր են առաջացնում, որ հայը, կանգնած այդ փառահեղ, սակայն ավերակ Անիի հուշարձանների մոտ, իսկույն զանգում է Երևան՝ հարազատին ու հուզմունքից խեղդվող ծայրով տեղեկացնում, թե տեսնում է Անին: Տեղին է հիշել մեծ հայրենասեր Շիրազի երազանքը՝ «Տեսնեմ Անին ու մոր մեռնեմ...»: Գրողը մանրամասն նկարագրում է այն կոթողներն ու շենքերը, որոնց հիացմունքից առաջացնող ավերակներն առանձնապես ներգործում են ամեն իսկական հայի վրա և ոչ միայն հայի:

Արևմտահայաստանում շատ են քրդացած հայերը. հատկապես Վանում և Մուշում: Ինչպես նկարագրում է Արտակ Վարդանյանը, հայի հետքն ամբողջովին ջնջված է Կարինում (Երզրումում): Այդ քաղաքի, ինչպես նաև Կարսի հայկական լինելը շեշտում է Ալեքսանդր Պուշկինը իր «Ճանապարհորդություն դեպի Երզրում» երկում դեռևս 1829 թվականին:

Վանի հայկական հետքերից են Վարագա վանքից բավականին լավ պահպանված մի եկեղեցի, որը իսկում են քրդերը, Սիերի դուռը, Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին: Հայկական հուշարձանների մասին խոսելիս գրքի հեղինակը պատումիմ գումարում է պատմական հավաստի փաստերը: Արևմտահայաստանի տեսարժան ու սրտաշարժ վայրերից են Սուլուխի կամուրջը, Եփրատ գետը, Մշո Ս.Կարապետ կամ Ինճակնյա իռչակավոր վանքը, որից մնացել են տխուր ու անշուք ավերակներ: Թուրքերը մեծ ջանասիրությամբ քանդել են հայ ժողովրդի պատմության մեջ այնքան մեծ հետք թողած վանական համալիրը՝ հայերի գլխավոր սրբատեղիներից մեկը: Հայ մշակույթի ոչնչացման վերաբերյալ ծանրակշիռ վկայություններ է թողել 1852-ին մեկ տարով Կիլիկիայում հնագիտական պեղումներ կատարող ֆրանսիացի նշանավոր հայագետ Վիկտոր Լանգլուան: Նա Ֆրանսիայի կայսր Նապոլեոն Երրորդին ուղարկած նամակում նշում է, թե թուրքերը ոչնչացնում են հայկական հուշարձանները, որպեսզի հետագայում չհիշվի, թե ովքեր են եղել նրանց տերերը:

Գրքի անմոռաց հերոսներից են հայ ժողովրդի մեծ նվիրյալ և նահատակ Գարեգին Նժդեհն ու նրա մայրը, հայ ազգագրական երգերը վերակենդանացրած Հայրիկ Սուրադյանն ու նրա արժանավոր դուստր Մարոն:

Արտակ Վարդանյանը պարսկերենի մասնագետ է և այդ լեզվից հայերեն թարգմանությունների հեղինակ: Ուշագրավ է, որ նրա մեջ դեպի պարսկերենն ունեցած սերն արթնացել է դպրոցական տարիքից և պահպանվել առ այսօր: Եղել է Իրանում, այցելել բազմաթիվ տեսարժան վայրեր Թավրիզում, Թեհրանում, Թուսում և այլուր: Այդ մասին գրում է առանձին խանդավառաբանքով: Շատ տպավորիչ է նրա այցելությունը Թուս՝ հանձարեղ Ֆիրդուսու ծննդավայրը: Իրանից ստացած տպավորություններում Ա.Վարդանյանը ներկայացնում է Հայաստանի գրողների միության նվիրյալ նախագահ Լևոն Ամանյանի դերը հայ-իրանական գրական կապերն ամրապնդելու կարևոր գործում: Նա հիմնել էր «Գրական կամուրջներ» խոսուն խորագիրը կրող մի մշակութային ձեռնարկ, որը Հայաստանի գրողների միությունը կապում էր աշխարհի այլ գրականությունների հետ:

Գրքի այս հատվածի հերոսներն են դառնում նաև իրանահայ անվանի թարգմանիչ Էդվարդ Հարությունյանը, «Փեյման» հանդեսի գլխավոր խմբագիր Արմինե Առաքելյանը, «Նաիրի» հրատարակչության տնօրեն, երջանկահիշատակ Սեպուհ Ամիրխանյանը, Հայաստանում Իրանի դեսպանության մշակույթի խորհրդական Հոսեյն



Թաթաթաթային, Իրանի արվեստների ակադեմիայի դեկավար Ալի Դամադանին, հայտնի իրանագետ Արմանուշ Կոզմյանը և շատ ուրիշներ:

Գրողի հատընտիրի մեջ իրենց պատվավոր տեղն են զբաղեցնում Արցախը և նրա սիրտը՝ Շուշին:

Շատ տեղին են հատկապես այն մեջբերվող տողերը, որոնք Օ. Մանդելշտամը գրել է Շուշիի մասին՝ ակնարկելով 1920-ին թուրքերի կազմակերպած հայերի զանգվածային կոտորածը: Սա նույնպես Աթաթուրքի քաղաքականության դրսևորումներից էր.

*Տեսա գիշատիչ քաղաքը Շուշի,
Ուր ճաշակեցի սարսափներ մահի
Հոգուս խռովքին համանվագ:*

Գրքի հերոսներից է Լուսիկ Ազուլեցին, որին երկար տարիներ կարելի էր տեսնել Երևանի փողոցներում Ազուլիս վաճառաչաի գյուղաքաղաքի՝ 19-րդ դարի կամանց հայկական տարագով: Պարզվում է, որ իր ծննդավայրում 1946-ին լույս աշխարհ եկած Լուսիկն իր կերպարով վերածնուն էր անդարձ կորած չքմաղ Ազուլիսը՝ Գողթան աշխարհի մարգարիտը, որը մեծ հետք է թողել հայ մշակույթում:

Հեղինակը մանրամասն փաստերով մերկացնում է նաև Ադրբեջանի հայատյացության ճշացող փաստերից մեկը՝ Հին Ջուղայի մշակութային մեծ արժեք ներկայացնող հազարավոր խաչքար-գերեզմանաքարերի ոչնչացումը:

Գրքում առանձին էսսեներով ներկայացված են հայոց լեզվին, գրականությանը, պատմությանն անմոռաց նվիրված Ռաֆայել Իշխանյանն ու Մարգո Դուկասյանը:

Արտակ Վարդանյանն այն հայերից է, որը որպես ճշմարիտ քրիստոնյա, իր պարտքն է համարել լինել Սուրբ երկրում: Գրքի այդ խոհագրության բնաբանը Ռազմիկ Դավոյանի հետևյալ բանաստեղծական տողերն են, որով կարելի է բնորոշել նաև այս գրքի ողջ ասելիքը.

*Եվ եթե հանկարծ քո ճանապարհին
Նախապապերիդ դու չհանդիպես,
Ուրեմն սխալ ճամփով ես գնում,
Եվ ոչ մի հրաշք չի փրկելու քեզ:*

Արտակ Վարդանյանի գիրքը պատգամում է այսօրվա հային՝ զնալ մեր նախապապերի նշած լուսավոր ուղիով:

Անլիտա ԴՈԼՈՒՄԻՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

ՀՈՒՇԵՐ ԼԵՎ ՏՈԼՍՏՈՅԻ ԵՎ ՖԵՌԴՈՐ ՇԱԼՅԱՊԻՆԻ ՄԱՍԻՆ*

Ես տատիկ չեմ ունեցել: Ավելի ճիշտ ունեցել եմ, բայց ճակատագիրն այնպես է ուզել, որ իմ ծնվելուց երկու տասնամյակ առաջ նա զոհ է գնացել թուրքական յաթաղանին: Բայց տատիկի գուրգուրանք զգացել եմ: Նա էր իմ առաջին և միակ տատիկը՝ Ելիզավետա Սարգսյանը, իմ Լիզա տատիկը: Շատ կրթված էր, աշխարհի տեսած: Նրա ամուսինը՝ Լևոն Սարգսյանը, ճանաչված մտավորական էր, հրատարակիչ: Մի որոշ ժամանակ զբաղվել է քաղաքականությամբ: Կարծեմ եղել է Հայաստանի լիազոր դեսպանը Պարսկաստանում: Եվ որտեղ էլ որ եղել է, նրա կողքին միշտ եղել է գեղեցկուհի կինը: Ես շատ էի սիրում լինել նրանց մեկ-սենյականոց բնակարանում, որը գտնվում էր Թբիլիսիի Չերժինսկու փողոցի թիվ 10 շենքում:

Այն օրը, երբ ես նրան ցույց տվեցի իմ հասունության վկայականը, նա նախ համբուրեց ինձ, շնորհավորեց, ապա ասաց.

- Տղա՛ս, դու արդեն հասունացած մարդ ես և կարող ես ինքնուրույն եզրակացություն անել և զննահատել այն իրադարձությունները, որոնց մասին ես կպատմեմ:

Եվ նա պատմեց այն, ինչը մի քանի տարի ուզում էի թղթին հանձնել: Ուղղակի ժամանակներն այլ էին, և ամեն ինչի մասին չէր կարելի հրապարակավ ասել: Այսօր ես դա անում եմ, թեև գիտակցում եմ, որ շատերին երևի դուր չի գա իմ գրածը:

- Անցյալ դարի վերջերն էին՝ սուլթան Համիդի կոտորածի օրերը: Աշխարհի բազմաթիվ առաջադեմ մտավորականներ իրենց բողոքի ձայնը բարձրացրին Թուրքիայում հայերի կոտորածի դեմ: Մոսկվայի հայկական համայնքի ղեկավարները հանձնարարեցին ամուսնու՝ Լևոն Սարգսյանին, ով այն ժամանակ այդ համայնքի պատասխանատու քարտուղարն էր, գնալ Յասնայա Պոլյանա՝ Լև Տոլստոյի մոտ, և խնդրել, որպեսզի նա ևս իր բողոքի ձայնը բարձրացնի համիդյան ջարդերի դեմ: Լևոնը ոգևորված մեկնեց Տոլստոյի կալվածքը: Վերադարձավ չորս օր հետո: Նա անճանաչելի էր դարձել: Ես նրան այդպես ընկճված երբեք չէի տեսել:

- Լևոն ջան, ի՞նչ է պատահել, ինչո՞ւ ես այդքան մռայլ,- հարցրի ես:

- Երանի ոտքս կոտրվեց, չգնայի Յասնայա Պոլյանա,- պատասխանեց ամուսինս և արեց հետևյալ պատմությունը.

- Տոլստոյի կալվածք գալու առաջին օրը նա ինձ չընդունեց: Չընդունեց նաև երկրորդ, երրորդ օրերին: Միայն չորրորդ

օրն ինձ ասացին, որ կոմսը պատրաստ է ինձ ընդունելու: Գնացի մոտը: Իր տնամերձ այգում, բախը ձեռքին, ինչ-որ գործ էր անում: Երբ ծառան նրան զեկուցեց, որ Մոսկվայի հայկական համայնքի ներկայացուցիչը եկել է, նա, առանց աշխատանքը ընդհատելու, դիմեց ինձ.

- Ի՞նչ է ուզածդ, ա՛յ հայ:

Նրա դիմելու այդ ձևից ես քիչ էր մնում՝ կաթվածահար լինել: Նման վիրավորանք ինձ երբեք ոչ ոք չէր հասցրել: Բայց քաջ գիտակցելով, թե ինչի համար եմ եկել, կուլ տվեցի այդ վիրավորանքը և դիմեցի գրողին:

- Մեծարգո՛ պարոն կոմս, Դուք հավանաբար գիտեք, որ Թուրքիայում տեղի է ունենում հայերի անողոր ջարդ: Ամբողջ համաշխարհային հանրությունն իր բողոքի ձայնն է բարձրացրել ի պաշտպանություն անմեղ խաղաղ ժողովրդի: Մոսկվայի հայկական համայնքը խնդրում է Ձեզ միանալ համաշխարհային հանրության այդ բողոքին:

- Ես դա անել չեմ կարող: Երևի հայերը մեղավոր են, որ նրանց կոտորում են:

- Բայց, Լև՝ Նիկոլայիչ, չէ՞ որ Դուք օգնեցիք մոլոկաններին, երբ նրանց ճնշում էին, Դուք անգամ նյութապես սատարեցիք նրանցից շատերին, ովքեր արտագաղթում էին Ամերիկա:

- Այո՛, բայց նրանք մոլոկաններ էին, բայց ոչ հայեր...

Ես ուղղակի ցնցված էի: Աշխարհահռչակ այդ գրողը, որին ես համարում եմ աշխարհի խոշորագույն գրողներից մեկը, այդքան ազգայնամուլ է: Որտեղի՞ց նրա մեջ այդ հայատյացությունը: Չգիտեմ: Ահա այսպես ես կորցրի մի հսկա գրողի...

...Տարիներ անց Մոսկվայի հայկական համայնքը որոշել էր բարեգործական համերգ կազմակերպել Մոսկվայում և դրանից գույացած գումարը փոխանցել հայ ուսանողների օգնության ֆոնդին: Արդեն կազմվել էր համերգի ծրագիրը, պայմանավորվածություն էր ձեռք բերվել ճանաչված բազմաթիվ երգիչ-երգչուհիների, Վալերի Բրյուսովի և այլոց հետ: Պայմանավորվել էինք նաև դահլիճի մասին: Համերգից երկու օր առաջ լուրեր տարածվեցին, որ Շալյապինը արտասահմանյան համերգային շրջագայությունից վերադարձել է Մոսկվա: Համայնքի ղեկավարությունը նորից խնդրեց Լևոն Սարգսյանին փորձել համոզել Ֆեոդոր Շալյապինին՝ իր մասնակցությունը բերելու այդ բարեգործական ծեռնարկին: Լևոնը կտրականապես հրաժարվեց՝ ասելով, որ ինքը Տոլստոյից ստացած հարվածից դեռ լիովին չի ապաքինվել, հիմա էլ պար-

տադրում եմ բանակցել մեկ այլ ռուս հանճարի հետ: Բայց մահանջել չէր կարելի: Լևոնն էր այդ միջոցառման կազմակերպիչը, նա էլ պետք է գնար Շալյապինի մոտ: Գնաց և մի երկու ժամ հետո ոգևորված տուն եկավ: Նա ուղղակի փայլում էր, չէր կարողանում ուրախությունը քաղցնել:

- Լևոն, պատմի՛ր, ինչպե՞ս ընդունեց քեզ Շալյապինը:

- Լիզա՛, սիրելի՛ս, նա մարդ չէ, նա աստված է,- պատասխանեց ամուսինս:- Նա ինձ շատ սիրալիկ ընդունեց և հենց գրույցի սկզբում ասաց.

- Մեծարգո՛ պարոն Սարգսյան, Դուք չեք կարող պատկերացնել, թե որքան ուրախ եմ Ձեր այցի համար: Ես երբեք չեմ մոռանա, թե ինձ համար հայերն ինչ են արել իմ ստեղծագործական ուղու հենց առաջին օրերից: Երբ 1892 թվականի գարնանը ես՝ երգչախմբի գործադուրկ երգիչս, հայտնվեցի Թիֆլիսում, ինձ օգնության ձեռք մեկնեցին տեղի հայերը: Եթե չլիներ Թիֆլիսի առաջին երաժշտական դպրոցի հիմնադիր, համատեղության կարգով նաև դեղորայքի պահեստի տեր Կոնստանտին Ալիխանովը, ես չէի կարողանա վոկալի դասեր վերցնել հիանալի մանկավարժ Դմիտրի Ուսատովից: Բավական չէր, որ Ալիխանովն ինձ իր տանը սեմյակ հատկացրեց, նա նաև ինձ ամսական 10 ռուբլի կրթաթոշակ նշանակեց:

Իմանալով գալուս նպատակը՝ Շալյապինը հարցրեց, թե որտեղ եմք մտադիր կազմակերպելու համերգը: Երբ ես նրան տվեցի դահլիճի ամուսնը, Շալյապինն ասաց.

- Հենց հիմա գնացե՛ք Մոսկվայի ամենամեծ համերգասրահի՝ «Երմիտաժի» տիրոջ մոտ և վարձակալե՛ք այն:

- Բայց, Ֆեոդոր՝ Իվանովիչ, նա մեզ դահլիճ չի տա: Համ էլ մենք այդքան գումար չունենք՝ մեծ համերգասրահ վարձակալելու համար:

- Ասացե՛ք այդ պարոնին, որ այդպես է ցանկանում Շալյապինը: Ասացե՛ք, որ ես Մոսկվայում այլ համերգ չեմ տալու, թող շտապ աֆիշներ պատվիրի:

Ես անմիջապես շտապեցի «Երմիտաժ»։ Տնօրենն ուրախությունից յոթերորդ երկնքում էր: Մի խոսքով, Լիզա՛ ջան, մեր համերգն աննախադեպ հաջողություն է ունենալու:

Նշանակված օրը դահլիճում ասեղ գցելու տեղ չկար: Այնտեղ էր Մոսկվայի ողջ ընտրամին: Բոլորը եկել էին աշխարհը նվաճած Շալյապինին տեսնելու:

Բնական է, որ Շալյապինն էր եզրա-

փակելու համերգը: Նրանից առաջ ելույթ ունեցողները կատարեցին մեկ-երկու ստեղծագործություն: Շալյապինը կատարեց երեքը: Դահլիճը ցնծում էր և վաճակարկում.

- «Բլիխու», «Բլիխու»...

- Դուք ուզում եք լսել «Բլիխա» երգը, հիմա կլինի, բայց մինչ այդ...

Եվ նա վերցրեց իր մորթյա մեծ գլխարկը և իջավ դահլիճ: Նա սկսեց փող հավաքել: Մարդիկ մեկը մյուսի գլխի վրայից աշխատում էին բաց չթողնել Շալյապինին «շաբաշ» տալու առիթը: Քիչ անց նրա գլխարկն արդեն լցված էր թղթադրամներով: Նա բարձրացավ բեմ, գլխարկի պարունակությունը դատարկեց դաշնամուրի վրա, նորից իջավ դահլիճ: Այդ արարողությունը կրկնեց ևս երեք անգամ, ապա դիմելով Լևոն Սարգսյանին՝ ասաց.

- Իսկ սա իմ կողմից... և նա կուտակված փողերի ողջ դեզը իր տարածած հսկա ձեռքերով մղեց դեպի հուզմունքից իրեն կորցրած Լևոն Սարգսյանը:

Եվ նա երգեց, երգեց մինչև գիշերվա ժամը երեքը՝ ամբողջությամբ կատարելով արտասահմանյան իր համերգաշարի ողջ ծրագիրը:

Երբ Շալյապինը նստում էր իր կառքը, նրան մոտեցավ Լևոն Սարգսյանը և ներկայացրեց իր տիկնոջը.

- Ֆեոդոր՝ Իվանովիչ, իմ կինն ուզում է ամձամբ Ձեզ շնորհակալություն հայտնել համերգի համար:

- Ինձ պետք չէ շնորհակալություն հայտնել: Ես արեցի այն, ինչ պարտավոր էի անել: Եթե այս համերգով ես կարողացա գոնե մի փոքր պարտահատույց լինել հայերին այն լավության և բարության համար, որ նրանք իմ երիտասարդության տարիներին հանդես են բերել իմ նկատմամբ, ես ինձ երջանիկ կզգամ...

Լևոն Ազրոյան, 2020 թ.

* *Խմբագրության կողմից.* այս հրապարակումը որոշ կրճատումներով արտատպվում է վաստակաշատ լրագրող Լևոն Ազրոյանի «Դարձ ի շրջանս յուր» գրքից:

Հուլիսի հեղինակը հասարակական գործիչ Լևոն Սարգսյանն է, որի 160-ամյակը լրացավ վերջերս: Նա XIX դ. վերջի և XX դ. սկզբի արևելահայ ճանաչված մտավորականներից էր: Դասավանդել է Ներսիսյան և Գայանյան դպրոցներում, Լազարյան ճեմարանում, եղել է Շուշիի թեմական դպրոցի տեսուչը, խմբագրել է «Մուրճ» ամսագիրը, հետագայում՝ ՀԽՍՀ լիազոր ներկայացուցիչը Պարսկաստանում:

Այս հուշերը 1950-ական թթ. գրքի հեղինակին պատմել է Լևոն Սարգսյանի կինը՝ Ելիզավետա Սարգսյանը:

ԱՄԵՆԱ-ԱՄԵՆԱ...

Աշխարհի ամենաշատ վաճառված գրքերը

«Գինեսի ռեկորդների» գիրքը ռեկորդակիր է վաճառքի առումով: Եթե վաճառված բոլոր գրքերը շարվեին իրար վրա, բարձրությունը 168 անգամ կզերազանցեր Էվերեստ լեռան բարձրությունը:

XXI դարում ամենաշատ վաճառված գրքերի թվում են նաև «Աստվածաշունչը» և Կ. Մարքսի «Կապիտալը»:

Աշխարհի ամենաթանկարժեք գիրքը

Լեոնարդո դա Վինչիի աշխատանքներով գիրքը համարվում է աշխարհի՝ մինչ օրս վաճառված ամենաթանկարժեք գիրքը: 72- էջանոց կողեքսը պարունակում է Լեոնարդո դա Վինչիի բնագիր էսքիզները և գիտական աշխատանքները: Հայտնի է, որ 1717 թ. գիրքը ձեռք է բերել կոմս Լեստեր Թոմաս Կուկը:

Իսկ 1980թ. այն գնել է Համմեր ազգամուսնով մոլաշահավաք: Հետագայում՝ 1994 թվականին, գիրքը գնել է Բիլ Գեյթ-



սը անհավանական՝ 30,8 մլն դոլարով:

Աշխարհի ամենաթանկ գրքերից է համարվում Եվրոպայի առաջին տպագրիչ Գուտենբերգի՝ 1455 թ. հրատարակած «Աստվածաշունչը», որի մեկ օրինակի համար 1926 թ. վճարել են 35 հազար դոլար: Ներկայումս այն պահպանվում է ԱՄՆ կոնգրեսում:

Աշխարհի ամենափոքր գիրքը

Ճապոնիայի Toppan Printing տպարանը հրատարակել է աշխարհի ամենափոքր գիրքը՝ «Չորս սեզոնի ծաղիկները» անվանումով: Գրքի չափն ընդամենը 0,75

x 0,75 միլիմետր է, ունի 22 էջ: Այն տեղեկատու է ճապոնիայի բոլոր ծաղիկների և բույսերի վերաբերյալ: Տեղեկատուն ստեղծվել է ութ ամսում:

Toppan-ն այն հրատարակել է խոշոր տպաքանակով: Գիրքը և ընթերցման համար հատուկ խոշորացնող ապակու հավաքածուն կարելի է ձեռք բերել 29.400 իենով:

Աշխարհի ամենամեծ գիրքը

Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաքում ներկայացվել է «Սա Մուհամմադն է» գիրքը, որը գրանց-



վել է Գինեսի ռեկորդների գրքում՝ որպես աշխարհի ամենամեծ գիրք:

Գրքում նկարագրվում է Մուհամմադ մարգարեի կենսագրությունը, ապա իսլա-

մի՝ որպես համաշխարհային խոշոր կրոնի պատմությունը: Գիրքը բաղկացած է 420 շքեղ էջից և կշռում է 1500 կգ: Գրքի երկարությունը 5 մետր է, լայնությունը՝ 4 մետր:

«Սա Մուհամմադն է» գիրքն ավարտին է հասցվել մեկ տարվա ընթացքում: Ընդհանուր արժեքը գերազանցում է 10 միլիոն դիրհամը (մոտ 2.7 միլիոն դոլար):

Հայկական ամենամեծ ձեռագիր մատյանը

XIII դարի «Մշո ճառընտիրը» ամենամեծ հայկական մագաղաթյա ձեռագիրն է, որը պահվում է Երևանի Մատենադարանում, 7729 համարի ներքո:

Այն գրվել և ծաղկվել է 1200-1202թթ. Երզնկայի Ավագ վանքում, Բաբերդի տաճարում կատարված ամենամեծ գրչական աշխատանքով: Գրիչ՝ Վարդան Կարնեցի, ծաղկող՝ Ստեփանոս, ունեցել է 660 թերթ, որից մեզ է հասել 601 մագաղաթյա թերթ: Կշիռը 28 կգ է: Հայ ժողովրդի մեծ ձեռագիրը ևս դժվար ճակատագիր է ունեցել, գերվել է և փրկագնվել: 1915թ. երկու մասի բաժանված ձեռագիրը փրկվել է գաղթական երկու հայ քույրերի շնորհիվ:

Կազմեց
Նվեր ՎԻՐԱՔՅԱՆԸ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՄԵՐ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ

ՄԵՆՔ ԱՇԽԱՐՀ ԵԿԱՆՔ

Մենք աշխարհ եկանք լույս երազներով եվ սպասեցինք ոսկե օրերի, Մեր սրտերը լի, երազների ծով, Ու երազներին մնացինք գերի:

Չուզեցինք տեսնել տրտմություն ու ցավ Մեր տրտմության մեջ ու մեր ցավերի, Խնդություն ու սեր մեր կողքով անցան, Եվ սպասեցինք ոսկե օրերի:

Տարիների հետ եկան ու անցան Դառնություն ու հոգս, երազանք ու սեր, Տարիներն անցան օրերի նման, Տեսանք՝ անցել են մեր ոսկե օրեր:

ԻՆՔԻ ՔԵՉ

Թեթև է բեռդ ու ծանր է այնքան, Դոգնել ես ինչի՞ց, սիրտդ կեղեքող Ցավերի՞ց ունայն, թե աննպատակ, Անխորհուրդ, անմիտ, չնչին հոգսերից, Խոսք ու զրույցից հոգիդ կողոպտող Ու այն հոգևոր ողորմությունից, Որ սպասում են ու աղերսում են Ծանոթ, անծանոթ ամեն պահ քեզնից: Բայց տրված է քեզ Աստուծո պարզ՝ Մեռակությունդ... Ա՛յ, հենց դրանից Ձրկել ես դու քեզ, դարձել ես օտար Ու վտարանդի ինքդ քո անձից:

Հենրիկ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀՀ ԳԱՎ թղթակից անդամ,
արվեստագիտության դոկտոր պրոֆեսոր

ՄԵՆՔ

Մենք պատերազմի սերունդ ենք եղել ծնված օրվանից, Ցավ ու սով ենք տեսել ու չենք վարանել այդ դժվար կյանքից, Բարոյական արժեքները աչքի լույսի պես մաքուր ենք պահել, Ու չենք զգացել մեզ կյանքում անտեսված: Եղել է նաև անհոգ երազների ժամանակահատված, Ապրել ենք բարօրության մեջ, սովորել անվճար, Ծրագրել ենք երիտասարդությունը մեր, Եկել, հասել ենք այս օրվան: Իհարկե եղել են սահմանափակումներ, Ժամանակների ոգով պայմանավորված, Սակայն ստեղծագործել ենք անհոգ, ապահով Մեծ պետության մեջ ապրելու իրավունքով: Հիմա ժամանակը թելադրում է նոր մի իրողություն, Իմ սերունդը այս մսխող աշխարհում կարծես տեղ չունի, Բայց ինչպես եղավ, որ մեր երկրում օտար ենք զգում, Թերևս թելադրանքն է մեր ժամանակի, Դարը շուտ եկավ, մենք չհասկացանք: Հասկանալ արդեն չենք կարողանա, Մեր ժամանակը կավարտվի շուտով, Անիվի նման պտտվում է նա առանց կանգնելու, Ճակատագիրը ուղղել չի լինում, վերից է կախված ընթացքը նրա:

Միքայել ՀԱՄԱՄՅԱՆ
Տեխնիկական գիտությունների
դոկտոր

ԵՐԱԶ

Երազ տեսա՝
Իբր իմ սեզ Ազնաբերդում,
Գողթան երկրիս վերջին ճրագ,
Վերջին ամրոց Ազնաբերդում
Մորս կողքին նստած էի
Իմ մանկության պատշգամբում:
Սրտիս ցավով տեսնում էի
Ասես մահվան մահի՞ծ մտած,
Հայաթափված
Նախճավանս,
Ավերակված,
Պղծված, եղծված
Ագուլիսն իմ,
Մայր Արաքսի
Որդեկորույս
Ափերով մեկ ցրիվ եկած
Հազարանախշ,
Հազարահյուս,
Հազարավերք
Հին Ջուղայիս
Խաչքարերը,
Հնուն անխոց,
Այսօր խոցված,
Ձարկված արծիվ
Երնջակս
Եվ սգավոր, մտամոլոր
Օծասարս...
Եվ այդ մռայլ մշուշի մեջ
Հանկարծ ցոլաց
Լույսի մի շող,
Որ երկնքից իջավ, բացվեց
Բազմաշարժար հայրենիքիս
Խոր վերքերին...
Եվ... լույսի հետ
Երկնից իջան
Երկու այրեր

Լուսապասկ՝
Մեկը Հիսուս Փրկիչն էր մեր,
Եվ երկրորդը
Վիրավորին ու ընկածին
Բալասանող
Սուրբ Գևորգն էր...
.....
Երբ արթնացա
Հրաշահյուս իմ երազից,
Մայրս ասաց.
- Որդիս, թե որ քո երազը չկատարվի,
Այս աշխարհում չարն է իշխում
Բարուն վրա....

ԽԱԶԻԿՈՒՄ

Խաչիկ գյուղի ալոճը
Մարջանի գույն ունի,
Երկինքը՝ փիրուզ ու
կապույտ-կապույտ...

Խաչիկ գյուղի ճամփան
Անցնում է հոգուս միջով
Եվ սլանում դեպի օրրանն իմ հայրենի...

Խաչիկում են հանգչում
Շիրիմներն իմ նախնյաց,
Տատիս մանկությունն է այնտեղ
Եվ տունը հայրական...

Խաչիկ գյուղին թիկնած Հարսնասարը
Ամեն այգաբացի
Կարոտով նայում է
Վիշապասարիս գերյալ,
Կարոտաբաղձ երգեր մրմնջում
Լուսնակ գիշերներին...

Արտակ ՎԱՐՊԱՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների
թեկնածու

ՎԵՐՀՈՒՇ ԱՆՅՈՒԽԺ

Երեսուն տարվա վաղեմություն ունեցող այս լուսանկարները պահվում են ԵՊՀ պատմության թանգարանում: Դրանք սիրով մեր թերթի խմբագրությանը տրամադրեց թանգարանի տնօրեն Հեղինե Գասպարյանը: Լուսանկարներում մեր տաղանդավոր հայրենակցուհի Շերիլին Սարգսյանն է՝ համաշխարհային կինոյի և փոփ երաժշտության մեգաաստղ Շերը: Ամտարակույս քչերը գիտեն, որ Շերը եղել է Հայաստանում: Նա հայրենիք էր ժամանել՝ բարոյապես և նյութապես սա-



տարելու արցախյան առաջին պատերազմում մեր ժողովրդի պայքարին: 1993թ. Շերի այցը կայացավ որոշակի գաղտնիության պայմաններում: Բացի այդ պատերազմական մուր ու ցուրտ տարիներին զանգվածային լրատվամիջոցներն այնքան էլ հասանելի չէին լայն հանրությանը: Շերին ջերմորեն ընդունեցին երևա-



Շերը ՀՀ ԳԱՎ ակադեմիկոսներ Սերգեյ Համբարձումյանի (աջից), Նորայր Առաքելյանի (ձախից), թղթակից անդամ Արամ Սիմոնյանի (վերևում) հետ

նի պետական համալսարանում. մեծ դաժնիքում կայացավ նրա հանդիպումը ուսանողության հետ:

Նա այսօր էլ դասվում է աշխարհի ամենահանրահայտ մարդկանց շարքում: Շատերն են տեղյակ Շերի հայաճառագործունեությանը, նրա գրառումներին և կոչերին, որոնք սոցցանցերով տարածվում են միլիոնավոր երկրպագուների շրջանում:

Իր դերասանական և կատարողական անզուգական տաղանդի և, վերջապես, կանացի անկրկնելի հմայքի շնորհիվ նա դարձել է մեր դարաշրջանի խորհրդանշերից մեկը: Շերը մշտապես հպարտանում է իր հայկական արմատներով, իսկ մենք՝ նրա առիթմով անհատականությամբ:

Հայազգի իշխանուհին և Ռուսաստանի քրիստոնեացումը

Հայտնի է, որ Հռոմեական կայսրությունը 395թ. բաժանվեց երկու մասի՝ արևմտյան, որը շարունակվեց կոչվել Հռոմեական կայսրություն, և արևելյան, որը կոչվեց Բյուզանդական կայսրություն: Դրանք առանձին, միմյանցից անկախ կայսրություններ էին: Բյուզանդական կայսրությունում մեծաքանակ էին հայերը, այդ թվում՝ պաշտոնյաները, զինվորական գործիչները, հոգևորական այրերը, որոնք մեծ ազդեցություն և դիրք ունեին: Նրանք այնքան ուժեղ էին, որ 867 թ. գրավեցին իշխանությունը, Բյուզանդիայի կայսրությունում հաստատվեց Հայկական դինաստիան, որի հիմնադիրը հայազգի Բարսեղ Առաջինն էր: Հայ կայսրերը Բյուզանդիան կառավարել են 190 տարի՝ 867-1057 թթ.:

Սկզբնական շրջանում Բյուզանդական կայսրությունը կառավարում էին համակայսր երկու հայ եղբայրները՝ Բարսեղ Երկրորդ Բուլղարասպանը և Կոնստանտինը: Հայերի ղեկավար դերակատարումը չի սահմանափակվել միայն Բյուզանդիայով: Հայկական դինաստիան բախտորոշ դերակատարում է ունեցել նաև Ռուսիայի ճակատագրում՝ կապված 988թ.

Ռուսիայի՝ քրիստոնեություն ընդունելու հետ: Նրանց քրոջ՝ Աննայի հետ ամուսնանալու ցանկություն է հայտնում Ռուսիայի իշխան Վլադիմիր Սվյատոսլավովիչը: Ամուսնանալու համար Աննան պայման է դնում, որ Վլադիմիրը պետք է ընդունի քրիստոնեություն: Վերջինս համաձայնվում է, և վերադառնալով Կիև՝ Վլադիմիրը հրամայում է ոչնչացնել կուռքերին, իսկ ժողովուրդը մկրտվում է Դնեպր գետում: Ռուսիան ընդունում է ուղղափառ քրիստոնեություն: Ուղղափառությունը՝ պրավոսլավինե, ինչպես հայտնի է, ռուսական պետության հիմքերի հիմքն է: Մյուս կողմից, եթե մի պահ ենթադրենք, որ Ռուսիան ընդուներ իսլամ, ապա դժվար է պատկերացնել, թե համաշխարհային պատմությունն ինչ ընթացք կունենար: Հայ իշխանուհի Աննան, որը դարձավ Ռուսիայի առաջին տիկին, բախտորոշ և դրական դերակատարում ունեցավ ոչ միայն Ռուսիայի, այլև համաշխարհային մասշտաբով:

Ըստ Նիկոլայ Հովհաննիսյանի «Հայոց պատմության անընդմեջ շղթան դարերի խորքից մինչև XXI դարի սկիզբ» գրքի, եր., «Գիտություն» հրատ., 2020:

Գիտություն

Ի տեղի գլխավոր խմբագրի՝ Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
խմբագիր՝ Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24/4, հեռ. 58-18-23, 3-16
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝ 24.01.2023 թ.:

"ГИТУТЮН" ("Найка") газета НАН РА